

ԱՆԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ «Տեղական մակարդակում կլիմայական ռիսկերի գնահատում» ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանում դիմակայուն համայնքների կայացմանն ու զարգացմանը, խթանելով համայնքի բնակչության և ՏԻՄ-երի ակտիվ ներգրավվածությունը կլիմայի փոփոխության ազդեցությանն արձագանքելու գործում՝ համայնքում կլիմայական ռիսկերը գնահատելու և դրանց նվազեցմանն ուղղված համարժեք գործողություններ իրականացնելու միջոցով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՄԻԱԿՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ)
հիմնադրամի կողմից իրականացվող «Տեղական մակարդակում կլիմայական
ռիսկերի գնահատում» ծրագիր**

Ֆինանսական աջակցություն՝ Ավստրիական զարգացման գործակալություն (ԱԶԳ)

Տևողություն՝ հունիսի 24, 2022թ. – փետրվարի 20, 2023թ.

Ծրագրային թիմ

Աշոտ Սարգսյան՝ ծրագրի համակարգող

Սուսան Մնացականյան՝ ԱՌԿ փորձագետ, վերլուծական թիմի համակարգող

Վահան Հարությունյան՝ ԱՌԿ փորձագետ, քարտեզագրման պատասխանատու

Գևորգ Պետրոսյան՝ վերլուծաբան, Շիրակի մարզային թիմի պատասխանատու

Արթուր Գևորգյան՝ կլիմայագետ

Նաիրա Մանդայան՝ վիճակագրության մասնագետ

Տաթևիկ Սիմոնյան՝ աղետների տեղեկատվության կառավարման մասնագետ

Աբրահամ Արտաշեսյան՝ համայնքային ֆինանսների փորձագետ

Տվյալների հավաքագրման, ճշգրտման և թվայնացման տեղական թիմի անդամներ՝

Համլետ Ղազարյան՝ համակարգող

Աննա Առաքելյան

Աշոտ Խաչատրյան

Հասմիկ Սիմոնյան

Ծրագրի իրականացմանն աջակցած կառույցներ՝

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, Շիրակի, Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի և Սյունիքի մարզպետարաններ, Իջևան, Ստեփանավան, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Անի, Վայք, Տեղ և Գորիս խոշորացված համայնքների համայնքապետարաններ:

Տիտղոսաթերթում օգտագործված պատկերակը վերցված է

https://www.flaticon.com/free-icon/climate-change_2644248?related_id=2644151&origin=search կայքէջից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....4
2. Համայնքի ներկայիս իրավիճակի համառոտ նկարագիր.....5

2.1.	Համայնքի սոցիալ-տնտեսական նկարագիրը	5
2.2.	Շիրակի մարզին սպառնացող բնածին վտանգավոր երևույթներ և կլիմայի փոփոխության համատեքստում վերջիններիս դրսևորումներում արձանագրված զարգացման միտումներ	7
2.3.	Համայնքի կլիմայական պատկերը և վերջին տասնհինգ տարիներին համայնքում արձանագրված արտակարգ դեպքերը	10
2.4.	Համայնքի ֆինանսական միջոցները	16
3.	Ծրագրի իրականացման գործընթաց	17
3.1.	Մեթոդաբանություն	17
3.2.	Աշխատանքների ամփոփ նկարագիր	18
3.3.	Տվյալների հավաքագրման գործիքակազմ և համայնքում առանձին գործիքների կիրառման հետ կապված առանձնահատկություններ	21
4.	Համայնքին սպառնացող վտանգներ և վերջիններիս ռիսկերին դիմակայելու համայնքին առաջարկվող հնարավոր լուծումներ	27
4.1.	Համայնքի խոցելիության և ռիսկերի գնահատման արդյունքներն ըստ բնակավայրերի ու խոցելի ոլորտների, վերջիններիս դիմակայելու հնարավոր լուծումների առաջարկներ ...	27
4.2.	Համայնքի կողմից ընտրված գերակա լուծումներ	83
4.3.	Համայնքի կողմից ընտրված գերակա լուծումների ֆինանսավորման հնարավոր աղբյուրները	103
5.	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	106
6.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	108
7.	ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	115

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ (ADB)
ԱԶԳ	Ավստրիական զարգացման գործակալություն (ADA)
ԱԻ	Արտակարգ իրավիճակներ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID)
ԱՈՆԱՊ	«Ադետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ
ԳՄՅԸ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)
ԵՄ	Եվրամիություն (EU)
ՉԼՄ	Չանգվածային լրատվության միջոցներ
ԽԿԳ	Խոցելիության և կարողությունների գնահատում (VCA)
ԿԻԿՄՄՖ	Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա (IFRC)
ԿԿԹ	Կոշտ կենցաղային թափոններ
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ԿՓՀ	Կլիմայի փոփոխության հարմարվողականություն
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿԵ	Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթներ
ՃԿԱԿ	ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն (UN)
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր (UNDP)
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
ՇՉՀԳ	Շվեյցարական զարգացման համագործակցության գրասենյակ (SDC)
ՊԳԾ	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության ծրագիր (FAO)
ՊՀԾ	ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր (WFP)
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)
ՎԷԱ	Վերականգնվող էներգիայի աղբյուրներ
ՏՄՌԿ	Տեղական մակարդակում ռիսկերի կառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ

1. Ներածություն

Վերջին տասնամյակներում Հայաստանի տնտեսությանը զգալի վնաս են հասցնում կլիմայի փոփոխության արդյունքում սաստկացած բնակլիմայական վտանգավոր երևույթները, այդ թվում սելավը, կարկտահարությունը, ուժեղ քամիները, հորդառատ անձրևները, ցրտահարությունը, երաշտը և այլն: Արձագանքելով կլիմայի փոփոխություններով պայմանավորված մարտահրավերներին, նաև հետամուտ լինելով ՄԱԿ-ի կլիմայի շրջանակային կոնվենցիային և Փարիզյան պայմանագրից բխող Հայաստանի պարտավորությունների իրականացմանը, ՀՀ կառավարությունը հանդես է եկել մի շարք իրավական նախաձեռնություններով՝ սահմանելով այդ մարտահրավերներին դիմակայելու ազգային քաղաքականություններն ու ռազմավարական խնդիրները: Այս համատեքստում էական է նշել ՀՀ կառավարության կողմից ընդունված **«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին»¹** և **«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին»** որոշումները², որոնցով հաստատվում են մոտակա տարիներին իրականացվելիք անելիքների ուղղվածությունն ու պլաններն ազգային, մարզային և տեղական մակարդակներում: Առանձնահատուկ նշված է կլիմայական ռիսկերի և դրանց դիմակայելուն ուղղված գործողությունների նշանակությունը երկրի, մասնավորապես, համայնքների դիմակայուն զարգացման գործում: Կառավարության կողմից ձեռնարկված քայլերը լայն աջակցության են արժանացել միջազգային հանրության կողմից: Առանձնաբար լուրջ դերակատարում են ունեցել ՄԱԿ-ի գործակալությունները (ՄԱՉԾ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՊԳԾ, ՊՅԾ), միջազգային զարգացման գործակալությունները (ԱՄՆՄԶԳ, ԱԶԳ, ԳՄՀԸ, ՇՉՀԳ), ֆինանսական կառույցները (ՀԲ, ՎԶԵԲ, ԱԶԲ) և Եվրամիությունը (ԵՄ): Ներկայացված կազմակերպություններից յուրաքանչյուրը տարիների ընթացքում մեծ ներդրումներ է կատարել Հայաստանում, աջակցելով կառավարությանը Հայաստանում կլիմայի փոփոխության հետ կապված քաղաքականությունների մշակման և իրագործման համար՝ ի կատարումն ՄԱԿ-ի կլիմայի շրջանակային կոնվենցիայից և Փարիզյան պայմանագրից բխող Հայաստանի պարտավորությունների՝ դարձնել Հայաստանը կլիմայի փոփոխությանը դիմակայելու ընդունակ երկիր:

«Կլիմայական ռիսկի գնահատումը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագիրն իրականացվել է Ադետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) կողմից, վերջինիս և Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) ֆինանսական աջակցությամբ: Այն իրականացվել է Ծրագրով նախատեսված թիրախային մարզերի խոշորացված համայնքներում: Ծրագրի նպատակն է **օժանդակել Հայաստանում դիմակայուն համայնքների կայացմանն ու զարգացմանը՝** խթանելով համայնքային բնակչության և ՏԻՄ-երի ակտիվ ներգրավվածությունը համարժեք արձագանքելու կլիմայի փոփոխության ազդեցությանը, ըստ այդմ ձեռնարկելով համապատասխան քայլեր համայնքում կլիմայական ռիսկերը նվազեցնելու և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողություններ իրականացնելու համար:

Ծրագիրն իրականացվել է կլիմայական բաղադրիչով հարստացված «Տեղական մակարդակում ռիսկերի կառավարում» (ՏՄՌԿ) մեթոդաբանությամբ, որի կիրառման արդյունավետությունը հաստատվել է Ալավերդի քաղաքում և Թումանյան խոշորացված համայնքում (2021թ.) փորձարկման արդյունքով:

Ծրագրի այս փուլում ներառվել են Հայաստանի հինգ մարզից ընտրված ութ համայնքի 99 բնակավայր (Աղյուսակ 1), որոնցից յուրաքանչյուրում գնահատվել են բնակավայրի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ և սպառնացող կլիմայական ռիսկերը, մշակվել և առաջարկվել են հարմարվողականության ոլորտային լուծումներ:

Աղյուսակ 1.

¹ ՀՀ կառավարության 22 ապրիլի 2021թ. N 610-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151985>

² ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N 749-Լ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=152612>

Ծրագրում ընդգրկված մարզեր, համայնքներ և բնակավայրեր

Մարզեր	Միավորված համայնքներ	Բնակավայրերի քանակը
Տավուշ	Իջևան	20
Լոռի	Ստեփանավան	4
	Լոռի Բերդ	7
	Գյուլագարակ	9
Շիրակ	Անի	19
Վայոց Ձոր	Վայք	20
Սյունիք	Գորիս	13
	Տեղ	7
ԸՆԴԱՄԵՆԸ	5	8
		99

Գնահատման արդյունքները քննարկվել են համայնքների հետ, որի արդյունքում սահմանվել է առաջարկված լուծումների գերակայությունը (բնակավայր առ բնակավայր) և այդ լուծումները համայնքային զարգացման պլաններում ներառելու հնարավորություններն ու իրագործելու ուղիները:

Ծրագրին առնչվող կազմակերպչական ու նյութատեխնիկական ապահովման հետ կապված հարցերն ու խնդիրները ամբողջությամբ հոգացել է ԱՌՆԱԴ հիմնադրամը:

2. Համայնքի ներկայիս իրավիճակի համառոտ նկարագիր

2.1. Համայնքի սոցիալ-տնտեսական նկարագիրը

Անի միավորված համայնքը ձևավորվել է 2017թ. Նոյեմբեր ամսին: Այն ամբողջությամբ համընկնում է Խորհրդային Հայաստանի Անիի վարչական շրջանի հետ և իր կազմում ընդգրկում է 19 բնակավայր: Համայնքի կազմի մեջ են մտնում Մարալիկ քաղաքը, Անիավան, Անիպեմզա, Աղին, Բագրավան, Բարձրաշեն, Գուսանագյուղ, Իսահակյան, Լանջիկ, Լուսաղբյուր, Հայկաձոր, Ձիթհանքով, Ձորակապ, Նորշեն, Շիրակավան, Ջրափի, Սառնաղբյուր, Սարակապ և Քարաբերդ գյուղական բնակավայրերը, որոնցից երկուսը գրեթե բնակեցված չեն (Նորշեն և Բարձրաշեն):

Անի միավորված համայնքը տեղադրված է Շիրակի մարզի հարավ-արևմտյան հատվածում, Ախուրյան գետի ձախ ափին, Շիրակի սարահարթում՝ ծովի մակերևույթից 1150-2000 մետր բարձրության վրա, միջին բարձրությունը՝ 1750մ: Բնակավայրերի մեծ մասը տեղակայված են Ախուրյան գետի հովտում՝ ծովի մակարդակից 1420-1570 մետր բարձրության վրա: Չորս բնակավայր տեղակայված է 1700-1800 բարձրության վրա (Բարձրաշեն, Ձիթհանքով, Մարալիկ և Ձորակապ), իսկ մյուս երեք բնակավայրը գտնվում է Արագած լեռնազանգվածի ստորոտներում՝ 1900-1960 մետր բարձրության վրա (Քարաբերդ, Սառնաղբյուր և Լանջիկ):

Անի համայնքի վարչական տարածքը կազմում է 44464.68 հա, հաշվառված բնակչությունը՝ 23113 մարդ, առկա բնակչությունը՝ 22226 մարդ, տնային տնտեսությունների թիվը՝ 5341, բնակչության խտությունը՝ 50 մարդ/քառ. կմ:

Բնակչության դրամական եկամուտների հիմնական աղբյուրներն են գյուղատնտեսությունից ստացվող եկամուտները և բնաիրային օգուտները, աշխատավարձը, արտագնա աշխատանքից ստացվող դրամական միջոցները, պետության կողմից կատարվող սոցիալական հատկացումները (թոշակ, նպաստ), ձեռնարկատիրական գործունեությունը և այլն:

Որոշ բնակավայրերում Անիավան, Անիպեմզա, Հայկաձոր, Բագրավան և այլն, գործում են հանքահումքային արդյունագործությամբ զբաղվող ընկերություններ:

Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 39053.44 հա, որը կազմում է համայնքի ողջ տարածքի 87.83%-ը: Վարելահողերը կազմում են 14950.93 հա, այդ թվում ոռոգելի՝ 913.7 հա

(փաստացի ոռոգվող 733.6 հա), արոտավայրերը՝ 22508.74 հա, խոտհարքերը՝ 94.77 հա, բազմամյա տնկարկները՝ 12.30 հա, գյուղ. նշանակության այլ հողատեսքերը՝ 1486.69 հա: Փաստացի ոռոգվող վարելահողերը կազմում են ամբողջ վարելահողերի մոտ 5%-ը:

Գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական գործունեությունը ծավալվում է հիմնականում անհատական գյուղացիական տնտեսությունների մակարդակով: Չարգացած է գյուղատնտեսության երկու հիմնական ճյուղ՝ անասնաբուծությունն ու դաշտավարությունը:

Միայն 2020թ. կարկտահարության հասցրած վնասը Անի համայնքում կազմել է ավելի քան 288 մլն դրամ, տարբեր աստիճանի վնասվել է 1000-1200 հա ցանքատարածություն: Երաշտից և քամիներից բուսաբուծությանը հասցված վնասը ստույգ հաշվարկված չէ, բայց այն շատ մեծ է, հատկապես 2021թ.-ին:

Համայնքում կլիմայական վտանգներից պաշտպանվելու և ռիսկերի կառավարման ուղղությամբ առանձնապես միջոցներ չեն ձեռնարկվում, անհրաժեշտ են մեծ ներդրումներ ոռոգման ցանցերը արդիականացնելու և ընդլայնելու համար, պետք են ստորգետնյա խոր հորեր և պոմպեր, ջրակուտակիչ նոր տարածքներ: Հավանաբար ավելի նպատակահարմար է փոքր ջրամբարների կառուցումը, ինչը համեմատաբար ավելի հեշտ է և էժան:

Համայնքը վերջին տարիներին ընդլայնել է հակակարկտային կայանների ցանցը. ներկայում առկա է 35 հակակարկտային կայան:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄ, 2022թ.

1. Մշտական բնակչություն	22986
2. Գրանցված ծնունդներ	299
2.Մահացության դեպքեր	156
3.Ամուսնություններ	102
4. Ամուսնալուծություններ	7
5. Տնային տնտեսություններ	6169
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ	959
7. Կենսաթոշակառուներ	2612
8. Հաշմանդամություն ունեցող անձինք	1195

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 2022թ.

1. Գրադարաններ	1
2. Արվեստի դպրոցներ	1
3. Երաժշտական դպրոցներ	1
4. Նախադպրոցական հիմնարկներ	3
5. Հանրակրթական դպրոցներ	18
6. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	1
7. Մարզադպրոցներ	2

ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ, 2022թ.

1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	33825
2. Բազմաբնակարան շենքեր	451
3. Բնակելի տներ (առանձնատներ)	3703

ԵՆԹԱԿԱՈՒԹՅԱՆ ԵՆՏՐՈՒՄՆԵՐ

Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	296,6
Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	62
Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	298
Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը	2

2.2. Շիրակի մարզին սպառնացող բնածին վտանգավոր երևույթներ և կլիմայի փոփոխության համատեքստում վերջիններիս դրսևորումներում արձանագրված զարգացման միտումներ

Շիրակի մարզը Հայաստանի աղետավտանգ և կլիմայական ծայրահեղ դրսևորումների նկատմամբ բարձր խոցելիություն ունեցող մարզերից մեկն է: Բնական աղետներից այստեղ առավել մեծ վտանգ են ներկայացնում՝ երկրաշարժերը, ուժեղ քամիները, կարկտահարությունը, սողանքները և սահքերը, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացող ջրհեղեղները, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, չորային կլիմայական պայմանները և երաշտը, որոնք զգալի վնաս են հասցնում մարզի տնտեսության տարբեր ճյուղերին, Եսկան բացասական ազդեցություն ունենալով բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

Շիրակի մարզը Հայաստանի ամենակարկտավտանգ տարածաշրջանն է: Ըստ նախկինում Ախուրյանի շրջանում գործող հակակարկտային կայանի բազմամյա դիտարկումների տվյալների, կարկտային օրերի թիվը մարզում կազմում է 20-25 օր: Ըստ 2004-2008թթ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների Շիրակի մարզում կարկտահարության հասցրած տարեկան միջին վնասը կազմում է շուրջ 3 մլրդ դրամ:

Ինչպես Հայաստանի մյուս մարզերն, այնպես էլ Շիրակի մարզը վերջին երկու տասնամյակների ընթացքում բազմիցս տուժել է ուժեղ քամիներից և նախկինում գրեթե չհանդիպող պտտահողմերից, ինչը հիմնականում մեծ վնաս է հասցրել բնակավայրերին և ենթակառուցվածքներին:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Շիրակի մարզում Եսկան բացասական ազդեցություն ունեն չորային կլիմայական պայմաններն ու երաշտը, որոնք էլ ավելի են ահագնանում և խորանում մարզի կլիմային բնորոշ մշտական քամիների առկայության պայմաններում, ինչը բարձրացնում է գոլորշիացումը և նպաստում անջրդի ցանքատարածություններում և կերհանդակներում բույսերի ջրազրկմանն ու արագ չորացմանը:


Կլիմայական աղետային երևույթներից ամենամեծ վնասը կրում է գյուղատնտեսության ոլորտը, ինչը մարզի բնակչության մեծ մասի համար հանդիսանում է ապրուստի հիմնական աղբյուրը: Չնայած սոցիալ-տնտեսական մյուս կարևոր ոլորտները, ինչպիսիք են՝ առողջապահությունը, բնակավայրերն ու ենթակառուցվածքները, Էներգետիկան, Էկոհամակարգերն ու բնական ռեսուրսները, զբոսաշրջությունը և այլն, ևս Եսկան վնասներ են կրում վերոհիշյալ աղետային երևույթներից:

Շիրակի մարզում ցանքատարածությունները գրեթե ամեն տարի ենթարկվում են կլիմայական վտանգավոր երևույթների բացասական ազդեցության՝ ցրտահարություններ, գարնանային վարարումներից առաջացող հեղեղումներ, կարկտահարություն, երկարատև չորային կլիմայական պայմաններ և երաշտ, որոնցից առաջացող վնասներն ու կորուստները կարող են կազմել 20-100%:

Ստորև ներկայացված են Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (ՃԿԱԿ) տվյալների հիմքով կառուցված Շիրակի մարզում արձանագրված արտակարգ դեպքերի և դրանց զարգացման միտումների սխեմատիկ պատկերները վերջին տասնամյակի ընթացքում (Գծապատկեր 1, 2):

Գծապատկեր 1.


Շիրակի մարզում բնածին վտանգներից առաջացած արտակարգ դեպքերի հանրագումարն ըստ տարիների, 2012-2021թթ.



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 1-ում բերված տվյալներից, դիտարկվող ժամանակահատվածում մարզում գրանցված արտակարգ դեպքերի հիմնական պատճառները հիդրոոդերևութաբանական վտանգներն են և դրանց ազդեցությամբ պայմանավորված երկրաբանական վտանգավոր երևույթները (սելավ, հեղեղում, փվածք, քարաթափում): Նման երևույթների առկայությունը համահունչ է Հայաստանում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված կանխատեսվող փոփոխությունների ընդհանուր միտումներին, որոնք ներկայացված են Հայաստանին վերաբերվող տեղական և միջազգային բազմաթիվ ուսումնասիրություններում:

Գծապատկեր 2.

Շիրակի մարզում արձանագրված արտակարգ դեպքերի վիճակագրությունից բխող առանձին վտանգների զարգացման միտումներ, 2012-2021թթ.



Բերված գծապատկերները ցույց են տալիս, որ դիտարկված ժամանակահատվածում հիդրոոդերևույթաբանական վտանգներով պայմանավորված արտակարգ դեպքերի թիվը աճել է և դրանց քանակը էապես ավելացել է 2018-2021թթ. ժամանակահատվածում (2012-2017թթ. ժամանակահատվածի միջինի նկատմամբ դեպքերի թիվը կրկնակի աճել է):

Գծապատկեր 2-ը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում Շիրակի մարզում զգալիորեն ավելացել է ուժեղ քամիների, ուժեղ կարկուտների և տեղատարափ անձրևների քանակը:

Որոշակի աճ է գրանցվել ցրտահարությունների, սելավների, կենդանիների հարձակումների և կայծակի դեպքերի պարագայում, ձնաբուքերի և ձնահյուսների քանակը ընդհակառակը նվազել է, իսկ մյուս վտանգներով պայմանավորված արտակարգ դեպքերի թիվը գրեթե չի փոփոխվել:

Գծապատկեր 1-ում և 2-ում պատկերված գրաֆիկների տվյալները բերված են համապատասխան հավելվածներում (Հավելված 1, 2):

Հարկ է նշել, որ մարզի մակարդակով բերված հիդրոոդերևույթաբանական վտանգավոր երևույթների (ՀՎԵ) ժամանակագրական պատկերն ու դրանց դրսևորումների փոփոխություններում նկատված միտումները ներկայացնում են մարզի վտանգներին ենթարկվածության ընդհանուր վիճակը, ինչը չի նշանակում, որ նույն պատկերն է տիրում առանձին վերցված համայնքներում: Իրականում, մարզի համայնքներում և բնակավայրերում առանձին վտանգների մասով միտումները կարող են տրամագծորեն տարբերվել, հաշվի առնելով բնակավայրի ռելիեֆի և ծովի մակերևույթից բարձրության առանձնահատկությունները:


2.3. Համայնքի կլիմայական պատկերը և վերջին տասնհինգ տարիներին համայնքում արձանագրված արտակարգ դեպքերը

Անի միավորված համայնքի կլիմայական իրավիճակի վերլուծության համար ընտրվել են Արթիկ և Թալինի օդերևույթաբանական կայանները, քանի որ Անի համայնքի տարածքում, մասնավորապես Ախուրյան գետի հովտում, չկա գործող օդերևույթաբանական կայան:

Անի համայնքին ամենամոտ օդերևութաբանական կայանը գտնվում է Արթիկում, որը սակայն լեռնային կայան է և գտնվում է ծովի մակերևույթից 1724 մ բարձրության վրա: Լրացուցիչ դիտարկվել է Արագածոտնի մարզի Թալինի օդերևութաբանական կայանը, որը գտնվում է Լանջիկ բնակավայրից մոտ 17-18 կմ հարավ, իսկ բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1637 մետր: Հետևաբար, ընտրված օդերևութաբանական կայանները ավելի բնութագրական են Արագածի լանջին տեղակայված Նախալեռնային և լեռնային բնակավայրերի համար, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1600 մետր և ավելի բարձրության վրա: Ախուրյան գետի հովտում գտնվող ցածրադիր բնակավայրերի կլիմայական պայմանները և կլիմայական ռիսկերը կարող են տարբերվել, պայմանավորված ավելի տաք և չորային կլիմայով, հովտային քամիների ազդեցությամբ և այլն:

Քարտեզ 1.

Շիրակի մարզի ռելիեֆը, Անի համայնքի բնակավայրերը և Արթիկի օդերևութաբանական կայանը



Անի համայնքը բնութագրվում է բարեխառն կլիմայով, որտեղ ամառները չոր և տաք են, իսկ ձմեռները՝ ցուրտ (Հայաստանի ջրային ռեսուրսների առկա, 2008թ.): Այնուամենայնիվ, Արագած լեռան ստորոտներում գտնվող բնակավայրերում ձմեռներն ավելի ցրտաշունչ են և մեր կողմից ընտրված երկու օդերևութաբանական կայանները ավելի շուտ բնութագրում են այս բարձրադիր գոտու կլիմայական պայմանները:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը Արթիկում և Թալինում տատանվում է 6,2°C -ից 7,8°C-ի սահմաններում: Վերջին տասնամյակների ընթացքում տարեկան միջին ջերմաստիճանը բարձրացել է 1,0 - 1,1°C-ով (Գծապետկեր 3):

Տեղումների քանակի տարեկան նորման կազմում է 447-564մմ: Վերջին տասնամյակների ընթացքում տարեկան տեղումների գումարային քանակը, նորմայի համեմատ, Էապես չի փոխվել:


Քամու միջին տարեկան արագությունը տատանվում է 1,8 մ/վրկ - 2,1 մ/վրկ: Այսպիսով, օդի տարեկան միջին ջերմաստիճանի փոփոխությունը Շիրակի մարզում ակնհայտ է, իսկ տեղումների

քանակը էապես չի փոխվել, չնայած նկատվել են տարվա ընթացքում դրանց տեղաբաշխման և ինտենսիվության որոշակի փոփոխություններ:


Գծապատկեր 3 ա., 3 բ.

Օդի ջերմաստիճանի (գիծ) և տեղումների քանակի (սյուներով) տարեկան միջին արժեքները Արթիկի և Թալինի օդերևութաբանական կայաններում 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում

3ա. Արթիկ




3բ. Թալին



Շիրակի մարզում երաշտային պայմանները ևս դիտվում են առավել հաճախակի մյուս հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների համեմատ: Արթիկում և Թալինում երաշտով օրերի միջին տարեկան թիվը զգալիորեն տարբեր է և կազմում է 21 և 60 օր/տարեկան համապատասխանաբար (Գծապատկեր 3ա., 3բ.): Վերջինս պայմանավորված է կայանների տարբեր կլիմայական պայմաններով: Չնայած միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացմանը, երաշտով օրերի միջին թիվը կամ նվազել է (Արթիկ), կամ էապես չի փոխվել (Թալին) ինչպես երևում է Գծապատկերներ 4-ում և 5-ում:


Գծապատկեր 4.

Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների միջին տարեկան օրերի քանակը Արթիկի օդերևութաբանական կայանում 1961-1990 թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում



Գծապատկեր 5.

Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների միջին տարեկան օրերի քանակը Թալինի օդերևութաբանական կայանում 1961-1990 թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում



Տեղումների քանակի ներտարեկան վերլուծությունը ցույց է տալիս, որ 1961-1990թթ. ժամանակահատվածի համեմատ, 2011-2020թթ. ժամանակահատվածի տարվա տաք ամիսներին (ապրիլ-սեպտեմբեր) տեղումների քանակը աճել է մոտ 10-20%-ով: Ավելին, վերջին տասնամյակի ընթացքում, հաջորդական չոր օրերի ժամանակահատվածի միջին տևողությունը կրճատվել է մոտ 3 օրով: Երաշտին հաջորդում են ցրտահարությունները և սաստիկ շոգերը: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, վերջին տասնամյակում ցրտահարությունների հաճախականությունը նվազել է, իսկ սաստիկ շոգ օրերի միջին տարեկան թիվն ավելացել է մոտ 5 անգամ:

Աղյուսակ 2.

Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթներին առավելագույն և միջին տարեկան օրերի քանակը Արթիկի օդերևութաբանական կայանում 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում

Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթ	1961-1990թթ.		2011-2020թթ.	
	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
Կարկուտ	14	5.5	2	0.8
Վտանգավոր քամի (≥ 25մ/վ)	2	0.5	1	0.3
Ուժեղ անձրև (≥ 30 մմ 12 ժամում)	2	0.2	1	0.4
Սաստիկ շոգ (≥ 32°C)	6	1.5	20	7.5
Հաջորդական չոր օրերի տևողությունը	65	28.6	30	25.3
Ցրտահարություն	Գարուն			

	5	3.2	3	2.1
	Աշուն			
	5	3.4	3	1.7
Երաշտ	81	30	31	21.4

Աղյուսակ 3.

Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներնեղի առավելագույն և միջին տարեկան օրերի քանակը Թալինի օդերևութաբանական կայանում 1961-1990թթ. և 2011-2020թթ. ժամանակահատվածներում

Հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթ	1961-1990թթ.		2011-2020թթ.	
	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
Կարկուտ	6	1.7	1	0.5
Վտանգավոր քամի (≥ 25մ/վ)	10	1.5	2	0.4
Ուժեղ անձրև (≥ 30 մմ 12 ժամում)	3	0.8	2	0.5
Սաստիկ շոգ (≥ 32°C)	8	2	22	9.5
Հաջորդական չոր օրերի տևողությունը	65	36	42	33.2
Ցրտահարություն	Գարուն			
	5	3.2	3	1.7
	Աշուն			
	5	3.2	4	2
Երաշտ	112	59	82	60.3

Կարկուտները, ուժեղ քամիները և անձրևները համեմատաբար հազվադեպ են դիտվում Շիրակի մարզի ընտրված օդերևութաբանական կայաններում համաձայն միջին վիճակագրության: Այստեղ ևս առանձին տարիներին այս երևույթների հաճախականությունը կարող է լինել զգալի: Օրինակ, եղել են տարիներ, երբ կարկուտով օրերի թիվը հասել է 10-14-ի: Նշված հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներնեղը նվազել են 2011-2020թթ. ժամանակահատվածում, որը կարող է պայմանավորված լինել միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացմամբ և չորացմամբ:


Ամփոփելով ներկայացվածը, կարելի է եզրակացնել, որ.

- Շիրակի մարզի Անի համայնքի բնակավայրերի մեծ մասում վերջին տասնամյակում դիտվել է միջին տարեկան ջերմաստիճանի համարժեք աճ ինչպես Իջևանի և Լոռու մարզի համայնքներում, սակայն տեղումների քանակը Էապես չի փոխվել համաձայն Արթիկի և Թալինի օդերևութաբանական կայանների դիտարկումների:
- Երաշտը համարվում է Անի համայնքում արձանագրված հիմնական կլիմայական ռիսկերից մեկը: Երաշտներով օրերի թիվը նվազել է վերջին տասնամյակում Արթիկի լեռնային կայանում, իսկ Թալինում Էապես չի փոխվել: Հաջորդական չոր օրերի միջին տևողությունը կրճատվել է 2011-2020թթ. ժամանակահատվածում և՛ Արթիկի, և՛ Թալինի օդերևութաբանական կայաններում:
- Երկրորդ կլիմայական ռիսկը 1961-1990թթ. պատմական ժամանակահատվածում ցրտահարություններն էին, սակայն վերջին տասնամյակում երկրորդ տեղը զբաղեցնում են սաստիկ շոգերը: Վերջինս պայմանավորված է կլիմայի տաքացմամբ, որի հետևանքով ավելի հաճախակի են դարձել սաստիկ շոգերը, իսկ ցրտահարություններն՝ ավելի հազվադեպ:
- Անի համայնքում համեմատաբար բարձր կրկնելիություն ունեն ուժեղ քամիների և ուժեղ կարկուտահարության ռեպերը: Եվ չնայած նրան, որ վերջին տասնամյակում դիտվել է կարկուտով օրերի նվազման միտում, Էապես աճել է դրանց ուժգնությունն ու ինտենսիվությունը:

Համադրելու համար ստորև ներկայացվում է ԱԻՆ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տվյալների հիման վրա վերջին 15 տարիներին Անի համայնքում արձանագրված արտակարգ դեպքերի վիճակագրությունն ըստ տարիների և բնակավայրերի (Գծապատկեր 6 և 7):


Գծապատկեր 6.

Անի համայնքում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված արտակարգ դեպքերի/տարերային երևույթների հանրագումարն ըստ բնակավայրերի



Գծապատկեր 7.

Անի համայնքում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված արտակարգ դեպքերի/տարերային երևույթների հանրագումարն ըստ տարիների



Գծապատկեր 6-ում պարզ երևում է, որ գրանցված կլիմայական արտակարգ դեպքերի քանակով, Անի համայնքի ամենավտանգված բնակավայրերն են Քարաբերդը, Սառնաղբյուրը, Անիավանը, Աղինս ու Ջրափին, միջին վտանգվածության աստիճան ունեն Լանջիկը, Մարալիկը, Բագրավանը, Գուսանազյուղը և Հայկաձորը, իսկ մյուս բնակավայրերն ունեն համեմատաբար ավելի ցածր վտանգվածության աստիճան:

Գծապատկեր 6-ից պարզ է դառնում նաև, որ արձանագրված կլիմայական արտակարգ դեպքերի գերակշիռ մասը կազմում են ուժեղ քամիներն ու կարկտահարությունը: Այս երկու վտանգներով պայմանավորված, կլիմայական արտակարգ դեպքերի քանակը կազմում է արձանագրված բոլոր դեպքերի 89.5%-ը (ուժեղ քամիներ՝ 51.6%, կարկտահարություն՝ 37.9%):

Գծապատկեր 7-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ առկա է կլիմայական արտակարգ դեպքերի տարեկան հանրագումարի զգալի աճման միտում:

Անի համայնքում 2018 և 2020 թվականներին արձանագրված արտակարգ դեպքերի միջին քանակը ավելի քան 3.5 անգամ գերազանցում է դիտարկվող ողջ ժամանակահատվածի մյուս տարիներին արձանագրված բոլոր դեպքերի միջին քանակությունը:

Այս երկու տարիների ընթացքում արձանագրվել է 16 տարիների ընթացքում Անի համայնքի բնակավայրերում արձանագրված բոլոր դեպքերի 40%-ը:

Ներկայացված գծապատկերների թվային տվյալները տե՛ս կից հավելվածներում (Հավելված 3, 4):

Իհարկե, Անի համայնքի կլիմայական արտակարգ դեպքերի հետ կապված իրավիճակի ավելի ամբողջական և ճշգրիտ վերլուծություն իրականացնելու համար առկա է տեղեկատվական բաց՝ կապված Անի համայնքի տարածքում հիդրոոդերևութաբանական կայանի և Ախուրյան գետի հովտում գտնվող բնակավայրերի կլիմայի վերաբերյալ երկարաժամկետ տվյալների բացակայության հետ:

հրավիճակի ավելի ճշգրիտ վերլուծության հետ կապված առկա է ևս մեկ տեղեկատվական մարտահրավեր, դա կապված է այն իրողության հետ, որ չորային կլիմայական պայմանները և սատիկ շոգ օրերը չեն գրանցվում որպես արտակարգ դեպքեր և չկան դրանց ազդեցության հետ կապված հավաստի տեղեկություններ:

Ներկայումս համայնքին սպառնացող վտանգների և դրանց հետագա հնարավոր դրսևորումների վերաբերյալ ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար, ծրագրային թիմը վերը բերված բոլոր տվյալները համադրել է ՏՄՌԿ գործիքակազմով տեղում հավաքագրված տվյալների հետ: Արդյունքում, գնահատվել է յուրաքանչյուր վտանգի ապագայում կայանալու հավանականությունը, ինչը հիմք է հանդիսացել այդ վտանգների նկատմամբ համայնքի խոցելիությունը և ռիսկը սահմանելու համար:

2.4. Համայնքի ֆինանսական միջոցները

Անի համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վերլուծության համար օգտագործվել են ՀՀ Շիրակի մարզպետարանի պաշտոնական էջում հրապարակված տվյալները³: Վերլուծությունը իրականացվել է 2020-2022թթ. բյուջեների պլանային ցուցանիշների հիման վրա (Հավելված 5):

Եկամուտների մասով Անի համայնքի բյուջեով 2020թ. համար նախատեսվել էր 988,688.69 հազար դրամ, որից 726,296.2 հազար դրամ՝ վարչական մասում, իսկ 262,392.5 հազար դրամ՝ ֆոնդային մասում: 2021թ. եկամուտները պլանավորվել են 1,255,299.30 հազար դրամ, որից 883,476.5 հազար դրամը՝ վարչական մասի եկամուտներ, իսկ 371,822.8 հազար դրամը՝ ֆոնդային մասի եկամուտներ: 2022թ. համար բյուջեով նախատեսվել է 1,212,155.60 հազար դրամ, որից 907,538.4 հազար դրամ՝ վարչական մասում, իսկ 484,617.2 հազար դրամ՝ ֆոնդային մասում:

Համայնքի բյուջեի տվյալները ցույց են տալիս, որ համայնքի եկամուտների գերակշիռ մասը, մոտ 65-77% ձևավորվում են պետության կողմից համայնքին տրամադրվող դրամաշնորհների, այդ թվում կապիտալ ներքին դրամաշնորհների հաշվին: Համայնքի սեփական եկամուտների տեսակարար կշիռը դիտարկված տարիների ընթացքում գրեթե չի փոփոխվում և կազմում է շուրջ 20%:

Համայնքի բյուջեի ծախսերի մասով դիտարկվել են 2020-2022թթ. ծախսերը գործառնական դասակարգմամբ: Ծախսերի գործառնական դասակարգումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական գործառույթների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է: Ընդհանուր առմամբ, համայնքի 2020թ. ծախսերը պլանավորվել են 911,064.9 հազար դրամ, որից 730,169.0 հազար դրամը պլանավորվել է վարչական մասի ծախսեր, իսկ 318,895.9 հազար դրամը՝ ֆոնդային մասի ծախսեր: 2021թ. համար այս ցուցանիշը պլանավորվել է 1,180,216.9 հազար դրամ, որից՝ 889,859.8 հազար դրամ՝ վարչական, 463,357.1 հազար դրամ՝ ֆոնդային մասի եկամուտ: 2022 թ. համար ընդհանուր ծախսերը պլանավորվել են 1,394,705.6 հազար դրամի չափով, որից 914,316.3 հազար դրամ՝ վարչական, իսկ 660,389.3 հազար դրամ՝ ֆոնդային մասերում:

Վերլուծելով համայնքի ծախսային ցուցանիշները կարելի է փաստել, որ Անի համայնքի բյուջեն դիտարկված տարիներին ունի աճի միտում՝ առաջին հերթին պետության կողմից համահարթեցման դոտացիաների և կապիտալ սուբվենցիաների աճի հաշվին: Կապիտալ սուբվենցիաների աճի հետ պայմանավորված, հստակ աճ է արձանագրվում ֆոնդային և վարչական բյուջեների հարաբերակցության մեջ: Եթե 2020թ. ֆոնդային բյուջի ծախսերը պլանավորվել էին ընդհանուր բյուջեի 35%-ի չափով, ապա 2022թ. այդ նույն ցուցանիշը կազմել է 47%, որը միջին հանրապետական ցուցանիշից մոտ 4 անգամ ավելի է: Կապիտալ ծախսերի մասով հատկապես աչքի են ընկնում ջրամատակարարման և փողոցների լուսավորման բյուջետային տողերով իրականացված ծրագրերը: Հատկանշական է նաև համայնքի բյուջեի վարչական մասի տարեկան ազատ մնացորդը, որն ամեն տարի տեղափոխվում է ֆոնդային մաս՝ համայնքում կապիտալ բնույթի ծրագրերի իրականացման համար:

Անի համայնքում բյուջեի եկամուտների և ծախսերի համամասնությունը, այդ թվում պետական տրանսֆերտների մեծ տեսակակարար կշիռը, հուշում են, որ համայնքի խնդիրներից շատերը

³ <http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/> և <http://shirak.mtad.am/community-budgetary-revenues/>

հնարավոր կլինի լուծել պետական բյուջեից ստացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, սակայն անհրաժեշտ է հնարավորության դեպքում ներգրավել նաև մասնավոր հատվածի ներդրումներ՝ ծրագրերի արդյունավետության բարձրացնելու համար: Այնուամենայնիվ, ծրագրերի ֆինանսավորման համար նախընտրելի ֆինանսավորման մեխանիզմի վերաբերյալ առաջարկները կներկայացվեն ըստ առանձին առաջարկվող լուծումների՝ հաշվի առնելով խնդիրների և լուծումների առանձնահատկությունները և արդյունավետ ֆինանսավորման մեխանիզմները:

3. Ծրագրի իրականացման գործընթաց

3.1. Մեթոդաբանություն

ՏՄՌԿ մեթոդաբանության հիմքում ընկած է Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԻՎՄՄՖ) կողմից մշակված տեղական մակարդակում աղետների ռիսկի բացահայտման, համայնքին սպառնացող վտանգների, այդ վտանգների նկատմամբ վերջինիս խոցելիության և կարողությունների գնահատման (ԽԿԳ) գործիքը: Այն մշակվել է, մասնավորապես գյուղական համայնքներում կիրառելու նպատակով: ԽԿԳ գործիքով իրականացված ուսումնասիրությունները, հիմնականում, առաջին մոտավորությամբ տալիս են համայնքին սպառնացող ռիսկերի ընդհանուր պատկերը՝ դրանք ճանաչելի և հասանելի դարձնելով համայնքի բնակչությանն ու ղեկավարությանը: ԽԿԳ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ձևավորվում է փաստացի տվյալների հավաքագրման արդյունքում առաջնային և երկրորդային աղբյուրներից, ներառյալ վիճակագրությունը, և չի ենթադրում որևէ խորացված մասնագիտական հետազոտություն:

ԽԿԳ գործիքը դասվում է տեղական մակարդակում ռիսկերի գնահատման միջազգայնորեն ճանաչված լավագույն գործիքների շարքում:

Ի տարբերություն ԽԿԳ-ի, ՏՄՌԿ-ն ոչ միայն գնահատման, այլ նաև պլանավորման մեթոդաբանություն է: Այն թույլ է տալիս գնահատել աղետների ռիսկերը ԽԿԳ գործիքակազմի օգտագործմամբ, ինչպես նաև մեխանիզմներ է պարունակում դրանց դիմակայելու հնարավոր գործողությունները փոխադարձ համադրելու և պլանավորելու համար՝ ելնելով

- ռիսկային առաջնահերթությունից,
- ֆինանսական, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների առկայությունից,
- լուծումների հնարավոր փոխադարձ ազդեցությունից և
- համայնքում զարգացման պլաններով նախատեսված գործողությունների հետ ունեցած առնչությունից՝ փոխազդեցության և համապատասխանելիության առումով:

ՏՄՌԿ գործընթացը հաջորդականորեն իրականացվող քայլերի համակցություն է՝ բաղկացած հետևյալ փուլերից.

- նախապատրաստական,
- տվյալների հավաքագրման և ճշգրտման,
- վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատման և, դրանց վերլուծության արդյունքում, յուրաքանչյուր վտանգի ռիսկայնության վերաբերյալ եզրակացությունների ձևավորման,
- բացահայտված ռիսկերին դիմակայելու համապատասխան գործողությունների մշակման և պլանավորման:

ՏՄՌԿ մեթոդաբանությունը, սկզբնական տարբերակում, բավարար հնարավորություն չէր ընձեռում կլիմայի փոփոխության պատճառով առաջացած նոր ռիսկերը բացահայտելու և դրանց դիմակայմանն ուղղված համահունչ քայլեր ձեռնարկելու համար: Մեթոդաբանությունը լավարկելու

Նպատակով ուսումնասիրվել է միջազգային փորձը⁴, մասնավորապես կլիմայական ռիսկերի գնահատման գոյություն ունեցող արդի մոտեցումները և վերջիններիս, տեղական մակարդակում կիրառելիության առումով, ավելի ոլորին ճանաչված ռիսկերի բացահայտման և գնահատման գործիքները: Ուսումնասիրությունների արդյունքում նախապատվությունը տրվել է Նույն ԿԽԿՄՄՖ ԽԿԳ գործիքի կլիմայական բաղադրիչով հարստացված տարբերակին, որը ստեղծվել է 2007-2012թթ.: ԽԿԳ նոր տարբերակում մի շարք գործիքներ ենթարկվել են կառուցվածքային փոփոխությունների, ներառելով բաղկացուցիչներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել կլիմայի փոփոխության պատճառով համայնքում առաջացող հավելյալ խնդիրների մասին: Ի տարբերություն այն բնական վտանգավոր երևույթների, որոնք կարող են հանկարծահաս աղետի պատճառ հանդիսանալ, կլիմայի փոփոխությունը դանդաղ ընթացող վտանգավոր երևույթ է: Այն աստիճանաբար, ժամանակի ընթացքում է բերում աղետալի հետևանքների, ինչը հաճախ տեղի է ունենում տարբեր վտանգների համակցության արդյունքում: Հայտնի է, որ կլիմայի փոփոխության ազդեցությունը արտահայտվում է հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բնութագրերի փոփոխությամբ՝ մեծացնելով վերջիններիս կայացման հաճախականությունն ու ուժգնությունը, կամ առաջացնելով եղանակային ծայրահեղ դրսևորումներ ու տատանումներ: Կլիմայով պայմանավորված նման երևույթներից առաջացած ռիսկերը բացահայտելու նպատակով է, որ ՏՄՌԿ ներկայիս մեթոդաբանության մեջ առաջարկվում է օգտագործել ԽԿԳ գործիքի կլիմայական բաղադրիչով հարստացված տարբերակը:

3.2. Աշխատանքների ամփոփ նկարագիր

Ռիսկերի գնահատման աշխատանքները համայնքում իրականացվել են ՏՄՌԿ մեթոդաբանության չորս փուլով նախատեսված գործողությունների լիարժեք իրականացմամբ՝ այցելելով և ուսումնասիրելով համայնքի բոլոր բնակավայրերը: Մինչ այցելությունները և բուն ուսումնասիրության ընթացքում ծրագրային թիմի և ԱՌՆԱԴ հիմնադրամի ադմինիստրացիայի կողմից ծավալուն աշխատանքներ են տարվել ուսումնասիրության հետ կապված անելիքների պլանավորման, տեղական մարմիններին տեղեկացնելու և աշխատանքները տեղերում կազմակերպելու, տեղական թիմեր ձևավորելու և ուսուցման, տեխնիկական և կազմակերպչական բազում այլ հարցերի կարգավորման ուղղությամբ:

1. Նախապատրաստական փուլ

Ծրագրային թիմի կողմից մշակվել է Ծրագրի իրականացման գործողությունների պլանը, ինչպես նաև ձևավորվել են վերջինիս հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Կազմակերպվել են հանդիպումներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում Շրջակա միջավայրի, Արտակարգ իրավիճակների, Տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչների և թիրախային մարզերի իշխանությունների հետ: Ներկայացվել են Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները, Ծրագրի իրականացման գործողությունների պլանն ու համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության սկզբունքները՝ ներառյալ համապատասխան մարմինների ներգրավվածության և ծրագրին օժանդակություն ցուցաբերելու ակնկալիքները, մասնավորապես տեղական թիմերի ձևավորման համար թեկնածուների առաջադրման և ընտրության հարցում: Մշակվել են տեղական թիմերի ուսուցման դասընթացների կյութերը: Լրամշակվել են ՏՄՌԿ մեթոդաբանության գործիքակազմի տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ գործիքները՝ հարմարեցնելով վերջիններս Ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմանը: Դասընթացները կազմակերպվել են Ծրագրի հինգ թիրախային մարզում օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում: Դասընթացների ավարտին ընդհանուր մասնակիցների կազմից ընտրվել են տեղական թիմերի անդամները:

2. Տվյալների հավաքագրման փուլ

Տեղական թիմերի կողմից համայնքներում տվյալների հավաքագրման աշխատանքներն իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի, բացառությամբ այն համայնքների, որտեղ

⁴ Դիտարկվել է Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի /IPCC/, ԿԽԿՄՄՖ, ՄԱԶԾ, Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և եներգիայի (CoM) և այլ փորձագետների խմբերի և կազմակերպությունների մոտեցումները:

աշխատանքներն, անվտանգության նկատառումներով, ժամանակավորապես հետաձգվել էին սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների պատճառով: Աշխատանքային պլանից եղել են նաև այլ ժամանակային շեղումներ՝ կապված անբարենպաստ եղանակային պայմանների հետ, որը սեզոնային գործոն է և վերաբերվում է այն բնակավայրերին, որոնց հասանելիությունը անձրևային օրերին և դրանցից հետո դառնում է խնդրահարույց:

Տվյալների հավաքագրման աշխատանքներում, ներառյալ մշակումն ու թվայնացումը, բացի տեղական թիմերի անդամներից ներգրավված են եղել նաև վերլուծական թիմի անդամներն ու Ծրագրի փորձագետները, որոնք համակարգել, ուղղորդել և, ըստ անհրաժեշտության, տրամադրել են մասնագիտական աջակցություն տեղական թիմերին: Չուգահեռաբար, հավաքագրված տվյալների վերլուծության վրա աշխատել են նաև վերլուծական թիմի անդամները:

Ծրագրի իրականացման աշխատանքային պլանի համաձայն ս.թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 20-ը անց է կացվել տեղական թիմերի գործունեության մոնիթորինգ: Այդ նպատակով մարզային պատասխանատուների մասնակցությամբ Ծրագրի ղեկավարությունը այցելել է թիրախային հինգ մարզում տեղակայված քաղաքային մեկական բնակավայր: Մոնիթորինգի արդյունքում առանձին ուշադրություն է դարձվել տեղական թիմերի կողմից տվյալների հավաքագրման գործիքակազմի կիրառման առանձնահատկությունների հետ կապված հարցերին և արձանագրված խոչընդոտների վերլուծությանը, ինչպես նաև հետագա անելիքներում հնարավոր խնդիրներից խուսափելուն ուղղված քայլերին: Այցելությունների ընթացքում վերհանված խնդիրները քննարկվել են թիմերի անդամների հետ և առաջարկություններ են արվել թիմերի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ծրագրային թիմը, անմիջապես մասնակցելով տվյալների հավաքագրման գործընթացին, թիմերին գործնական օժանդակություն է ցուցաբերել գործիքների կիրառման նրբություններն ավելի խորը հասկանալու և արդյունավետ կիրառելու նպատակով: Ի աջակցություն տեղական թիմերի և ի նպաստ թիմերի ու տեղական ղեկավարության համագործակցության սերտացմանը, ծրագրային թիմը մասնակցել է նաև համայնքային հանդիպումներին:

Լոռու տեղական թիմի մոնիթորինգի հետ համատեղ անց է կացվել նաև վերլուծական թիմի արտագնա աշխատանքային հանդիպում:

Մոնիթորինգի պլանավորման, այցելությունների հետ կապված տեխնիկական հարցերի, տեղական իշխանության տեղեկացման և ներգրավվածության հետ կապված բոլոր աշխատանքներն անց են կացվել Ծրագրի ղեկավար կազմի, վերլուծաբանների խմբի, տեղական թիմերի համակարգողների և ԱՌՆԱՊ տնօրինության անմիջական մասնակցությամբ:

3. Տվյալների վերլուծության ու ռիսկերի գնահատման փուլ

Այս փուլի աշխատանքներում ներգրավված են եղել Ծրագրի փորձագետներն ու վերլուծական թիմը: Թիմի մարզային պատասխանատու վերլուծաբաններն իրականացրել են բազմակողմանի վերլուծություն. ուսումնասիրել, տեսակավորել և ճշգրտել են տեղական թիմերի ներկայացված տվյալները՝ համադրելով տարբեր գործիքներով ստացված առաջնային տվյալները երկրորդային աղբյուրներից քաղված տվյալների, ինչպես նաև Ծրագրի փորձագետների մասնագիտական գնահատականների հետ: Վերլուծության արդյունքում բացահայտվել են կլիմայի փոփոխության հետ կապված համայնքին (բնակավայր առ բնակավայր) սպառնացող գերակա վտանգներն ու կլիմայական ռիսկերը: Այդ աշխատանքների ընթացքում վերլուծական թիմը մշտական կապի մեջ է եղել տեղական թիմերի հետ՝ առանձին դեպքերում տվյալների իսկությունը ճշտելու համար:

Ծրագրի համակարգողների կողմից մշակվել և տրամադրվել են ռիսկի և ռիսկի առանձին բաղադրիչների բացահայտման և գնահատման ստանդարտ ձևանմուշներ՝ քանակական և որակական տվյալների վերլուծություններում միասնական հայեցակարգային մոտեցումներ ցուցաբերելու համար: Վերլուծական աշխատանքներն իրականացնելու ընթացքում համակարգողների կողմից պարբերաբար անց են կացվել առցանց և առերես հանդիպումներ՝ որոնք նպաստել են վերլուծական աշխատանքների սահուն գործընթացի ապահովմանը: Բացահայտված ռիսկերի հիման վրա վերլուծական թիմերի կողմից առաջարկություններ են արվել համայնքում կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտային լուծումների վերաբերյալ:

4. Արդյունքների ամփոփման և ներկայացման փուլ

Հատուկ մշակված ձևանմուշով կազմվել է աշխատանքային հաշվետվություն, որտեղ ներկայացվել են թիրախային համայնքների և բնակավայրերի ռիսկերի գնահատմանն ու հարմարվողականության լուծումների վերաբերող արդյունքներն ու ձեռքբերումները: Համաձայն նախնական պայմանավորվածության դրանք ներկայացվել և քննարկվել են բոլոր թիրախային համայնքներում ու բնակավայրերում՝ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռել համայնքին ու համայնքի ղեկավարությանը առաջարկող լուծումների բազմությունից ընտրել իրենց համար առաջնահերթ և տեսանելի լուծումները: Համայնքի կողմից ընտրությունը կատարելուց հետո առանձին քննարկվել են համայնքի ռազմավարական պլանում ընտրված լուծումների ինտեգրման հնարավորությունները: Հիմնվելով համայնքում կայացված որոշումների վրա, ծրագրային թիմը վերանայել, ճշգրտել և մշակել է ծրագրային հաշվետվության վերջնական տարբերակը: Այն ներկայացվել է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպված ընդհանուր հավաքին: Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը ուղարկվել է Ծրագրի հետ առնչվող նախարարություններին, թիրախային մարզերի և համայնքների ղեկավարությանը, բնակավայրերի վարչական ղեկավարներին ու Ծրագրի դոնորներին:

3.3. Տվյալների հավաքագրման գործիքակազմ և համայնքում առանձին գործիքների կիրառման հետ կապված առանձնահատկություններ

Ինչպես արդեն վերևում նշվեց, համայնքում աղետների և կլիմայական ռիսկերի բացահայտման և գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով օգտագործվել է ՏՄՌԿ մեթոդաբանության ԽԿԳ կլիմայի բաղադրիչով հարստացված գործիքակազմը: Ստորև նկարագրված է գործիքակազմում ներգրավված գործիքներից յուրաքանչյուրի ներդրումը տվյալների հավաքագրման գործում, նաև տեղերում վերջիններիս կիրառման հետ կապված առանձին մանրամասներ և առանձնահատկություններ:

▪ Երկրորդային աղբյուրների տվյալների հավաքագրում

Այս աղբյուրներից հավաքված տվյալները տրամադրում են նախնական տեղեկատվություն համայնքի և վերջինիս ցարգացման պլանների մասին: Մասնավորապես դրանք կարող են լինել ՀՀ կառավարության որոշումներ, պետական կառույցների (նախարարություններ, ազգային վիճակագրական ծառայություն, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական մարմիններ) կողմից հրապարակված պաշտոնական հաշվետվություններ, զեկույցներ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքում իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվություններ, հետազոտություններ, զեկույցներ, ՉԼՄ-ների կողմից հրապարակված նյութեր և այլն: Համայնքի զարգացման պլանների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ունենալը մեծապես կարող է նպաստել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության գործողությունների հետագա մշակման և պլանավորման գործընթացին: Կարևորվում է նաև համայնքի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրումը:

▪ Ուղղակի դիտարկում

Ուղղակի դիտարկման նպատակն է շրջայցի միջոցով գրանցել այն ամենն, ինչը կարող է պարունակել վտանգ կամ վտանգին դիմակայելու կարողություն, ինչպես նաև կարող է նպաստել աղետների ռիսկի նվազեցմանը, մեղմմանն ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործողությունների իրականացմանը: Ուղղակի դիտարկման ժամանակ գրանցվում են ԽԿԳ գործընթացի համար անհրաժեշտ համայնքից ստացված առաջնային տպավորություններն ու տեղեկատվությունը: Այն կարող է վերաբերվել առարկաների, մարդկանց, երևույթների, հարաբերությունների և այլն: Հավաքված տվյալները սովորաբար լինում են բազմաբնույթ, քանի որ պարունակում են տեղեկատվություն համայնքի ֆիզիկական տվյալների և կենսագործունեության վերաբերյալ: Կարող են լինել նաև հատուկ նշանակության օբյեկտների սեյսմակայունության գնահատման վերաբերյալ նկատառումներ:

▪ **Սխեմատիկ պատկերում**

Տվյալների հավաքագրման փուլի կարևորագույն գործիքներից մեկն է, որով ձևավորվում են աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի կարողությունների և խոցելիության սխեմատիկ պատկերները: Սխեմատիկ պատկերման նպատակն է ակնառու դարձնել համայնքի հիմնական ռիսկային գործոններն ու տեղանքները:

Այն պետք է հնարավորինս տվյալներ տրամադրի շրջակա միջավայրի հիմնական փոփոխությունների վերաբերյալ, այդ թվում նաև կլիմայի փոփոխության ազդեցության հետ կապված:

Սխեմատիկ պատկերման գործընթացը պարտադիր ներառում է համայնքում առկա հասարակական նշանակության օբյեկտները, մասնավորապես առողջապահական, նախակրթական և կրթական, մշակութային հաստատությունները, խաղահրապարակները, մարզադաշտերը, վերջիններիս շրջակայքը, սպառնացող վտանգի ակնհայտ և թաքնված գործոնները և այլն:

▪ **Քննարկումներ թիրախային խմբերում**

Թիրախային (ֆոկուս) խմբերը ձևավորվում են համայնքի այն անհատներից, որոնք պատկանում են որոշակի մասնագիտական, տարիքային, սեռային կամ սոցիալական խմբերի, այն է՝ վարչական աշխատողներ, բուժանձնակազմ, ուսուցիչներ, ֆերմերներ, կանայք, տարբեր տարիքային խմբերի երեխաներ և այլն: Հնարավորինս անհրաժեշտ է ներգրավել նաև տարիքով մարդկանց, որոնք կարող են էական տեղեկություններ հաղորդել կլիմայի փոփոխության հետ կապված ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ:

Թիրախային խմբերում քննարկումները նպաստում են տարբեր ոլորտներին (առողջապահություն, գյուղատնտեսություն, շրջակա միջավայր, բնակավայր և ենթակառուցվածքներ, ջրային ռեսուրսներ, կենսապահովում, այլ) վերաբերող տեղեկությունների հավաքագրմանը, առկա ռիսկերի նկատմամբ սոցիալական տարբեր շերտերի խոցելիության աստիճանի բացահայտմանը և այլն:

Աշխատանքը թիրախային խմբերի հետ խիստ կարևորվում է, քանի որ արդյունքում հնարավոր է բացահայտվեն համայնքի զարգացման որոշակի ոլորտներին սպառնացող վտանգներ և ռիսկեր, ներառյալ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, և քննարկվեն համայնքի համար կենսական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված հնարավոր ձեռնարկումներ:

▪ **Հարմարեցված (ճկուն) հարցազրույց**

Հարմարեցված (ճկուն) հարցազրույցը կիրառվում է թիրախային հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու կամ տրամադրելու համար: Մասնակիցների հետ զրույցներ են ծավալվում համայնքային կյանքի տարբեր ոլորտներում (առողջապահություն, գյուղատնտեսություն, ձկնաբուծություն, այլ) նրանց կողմից դիտարկվող փոփոխությունների մասին, այդ թվում՝ ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները, ինչ իրադարձությունների հետևանքով են դրանք առաջացել և ինչ հետևանքների հանգեցրել, կապված են արդյոք այդ փոփոխությունները կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երևույթների հետ: Հնարավորինս անհրաժեշտ է տեղեկատվություն ստանալ տեղի ունեցած եղանակային ծայրահեղ դրսևորումների կամ տարիների ընթացքում նկատված ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունների վերաբերյալ:

▪ **Սեզոնային օրացույց**

Սեզոնային օրացույցն աղյուսակային մեթոդ է և հնարավորություն է տալիս նկարագրել մեկ տարվա ընթացքում համայնքում տեղի ունեցած փոփոխությունները: Սեզոնային օրացույցը ցույց է տալիս տարվա ընթացքում տեղի ունեցած աղետները, դրանց ազդեցությունը, կլիմայական փոփոխությունները, բռնկված հիվանդությունները, եկամուտների նվազումը կամ աճը և այլն: Սեզոնային օրացույցը հնարավորություն է տալիս պարզելու նաև, թե արդյո՞ք սեզոնայնության տեղաշարժ է նկատվում, ինչը հնարավոր է բացասական ազդեցություն ունենա առողջության,

ապրուստի միջոցների, կենսական այլ կարևոր նշանակություն ունեցող ոլորտների վրա: Առաջարկվում է նախ դիտարկել ներկա իրավիճակը և հետո անդրադառնալ վերջին տասնամյակներում տեղի ունեցած փոփոխություններին, դիտարկման համար ընտրելով հնարավորինս երկար ժամանակահատված:

Գյուղատնտեսություն	Մարայիկ Ձիթհանքով	Խոտածածկ տարածքներում կենցաղային աղբի և պլաստիկ թափոնների կուտակումների բացառում, դրանց պարբերական մաքրում	1.159	
Գյուղատնտեսություն	Մարայիկ	Դաշտային հրդեհների վնասների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, անվտանգության պահպանման նորմերի տարածում	1.160	
Գյուղատնտեսություն	Մարայիկ	Ուսումնասիրել դաշտերում ջրակուտակման միավորների (ձնհալից գոյացած ջրերի և անձրևաջրերի կուտակման ավազաններ) ստեղծման հնարավորությունները	1.163	
Մարդու առողջություն	Անիպեմզա Ձիթհանքով Ձորակապ Քարաբերդ	Բնակավայրերի քամահար հիմնական ուղղությունների երկայնքով հողմապաշտպան անտառաշերտերի հիմնում, այդ թվում նաև արագաճ ծառատեսակներով	2.1	
Մարդու առողջություն	Անիպեմզա Մարայիկ Ձորակապ Ձիթհանքով Սառնաղբյուր	Բնակավայրերի կանաչապատ տարածքների ընդլայնում	2.2	

Մարդու առողջություն	Մարայիկ Ձորակապ Լանջիկ	Համայնքային մակարդակում ըստ բնակավայրերի հանրային տարածքների Ֆունկցիոնալ կանաչապատման ծրագրի մշակում և իրականացում	2.3	
Մարդու առողջություն	Գուսանազյուղ Շիրակավան	Բնակավայրերի փողոցների սանիտարական մաքրման և բարեկարգման աշխատանքների պատշաճ իրականացում	2.4	
Մարդու առողջություն	Մարայիկ Գուսանազյուղ Շիրակավան	Կոշտ կենցաղային թափոնների պատշաճ կառավարման համակարգի ստեղծում և աղբահանության կանոնավոր կազմակերպում	2.5	
Մարդու առողջություն	Մարայիկ Գուսանազյուղ Շիրակավան	Համայնքում թափոնների կառավարման այլընտրանքային տարբերակների մշակում և համապատասխան ներդրումային ծրագրերի իրականացում	2.7	
Մարդու առողջություն	Մարայիկ Անիպեմզա Լանջիկ Ձորակապ Ձիթհանքով	Հակակարկտային պաշտպանության արդյունավետ համակարգի ներդրում (հակակարկտային ցանցերի կիրառում տնամերձ հողամասերում և այգիներում)	2.8	
Մարդու առողջություն	Անիավան Անիպեմզա	Խմելու ջրի մատակարարման քանակի և որակի բարելավում, ջրամատակարարման ներքին և արտաքին ցանցերի վերանորոգում	2.11	
Մարդու առողջություն	Անիպեմզա Լանջիկ Ձիթհանքով Ձորակապ	Խմելու ջրի մաքրման և վնասագերծման ենթակառուցվածքների հիմնում և պատշաճ սպասարկում	2.12	
Մարդու առողջություն	Մարայիկ Անիպեմզա	Բնակավայրերում խմելու ջրի պահեստավորման կարողությունների ստեղծում	2.13	
Մարդու առողջություն	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրեր	Ոռոգման ջրի հետ կապված խնդիրների կարգավորում և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու գործելակերպի պակասեցում	2.15	
Մարդու առողջություն	Անիպեմզա Մարայիկ Ձորակապ	Բնակավայրերում կոյուղու ցանցերի և կոյուղաջրերի մաքրման լոկալ համակարգերի կառուցում, կոյուղաջրերի կենսաբանական մաքրում և ջրերի օգտագործում ոռոգման նպատակով	2.16	
Մարդու առողջություն	Ձորակապ	Գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման և պահպանման համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում (սառնարանային և սննդի պահեստավորման տնտեսություններ)	2.19	

Մարդու առողջություն	Լուսաղբյուր Սարակապ Ձորակապ Գուսանագյուղ Շիրակական Ջրափի	Բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում	2.22	
Մարդու առողջություն	Մարալիկ	Ուսումնասիրել սելավատարի կառուցման հնարավորությունը, հատկապես հին գերեզմանատան տարածքում	2.26	
Մարդու առողջություն	Մարալիկ, Ձորակապ	Բարելավել առկա ջրահեռացման համակարգի վիճակը և իրականացնել մաքրման աշխատանքներ	2.27	
Մարդու առողջություն	Մարալիկ	Բացառել ջրահեռացման համակարգը որպես կոյուղատար և աղբատար օգտագործելը	2.28	
Մարդու առողջություն	Մարալիկ	Սողանքի ուսումնասիրություն և առկա իրավիճակի հստակ մասնագիտական գնահատում	2.32	
Մարդու առողջություն	Մարալիկ	Ըստ հնարավորության սողանքի կայունացման աշխատանքների պլանավորում և իրականացում	2.33	
Մարդու առողջություն	Մարալիկ	Սողանքի կայունացման անհնարիսության դեպքում վտանգի գոտում գտնվող բնակելի տների և ենթակառուցվածքների տեղափոխման հնարավորությունների քննարկում և համապատասխան միջոցառումների իրականացում	2.34	
Մարդու առողջություն	Մարալիկ Սառնաղբյուր	Ամպրոպի և կայծակի ժամանակ վարվեցողության և ճիշտ գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	2.36	
Մարդու առողջություն	Մարալիկ Ձորակապ Սառնաղբյուր	Կայծակավտանգ տարածքներում շանթարգելների տեղադրում, հատկապես հանրային տարածքներում և շինություններում	2.37	
Մարդու առողջություն	Մարալիկ Ձորակապ	Ենթակառուցվածքների մետաղական տարրերի պարտադիր հողանցում	2.38	
Մարդու առողջություն	Մարալիկ Ձորակապ	Իրականացնել վաղ ազդարարման համակարգի ձևավորման աշխատանքներ կամ առկա համակարգի արդիականացում, դրանց սարքինության և, ըստ անհրաժեշտության, գործարկման ապահովում	2.39	
Մարդու առողջություն	Մարալիկ Լանջիկ Ձորակապ Սառնաղբյուր	Ձմեռային ամիսներին միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների սպասարկման պատշաճ մակարդակի ապահովում	2.42	

Մարդու առողջություն	Անի համայնքի բոլոր բնակավայրեր	Անի համայնքի բնակավայրերում խթանել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական խմբերի ստեղծում երիտասարդների ներգրավմամբ՝ համագործակցելով համապատասխան կառույցների և ծառայությունների հետ	2.45	
Մարդու առողջություն	Անի համայնքի բոլոր բնակավայրեր	Խոտածածկ տարածքների այրման արգելանքի խիստ կիրառում՝ բացատրական աշխատանքների և վարչական պատժամիջոցների հետևողական կիրառման միջոցով	2.46	
Մարդու առողջություն	Մարայիկ Գուսանագյուղ Շիրակական Ձորակապ	Խոտածածկ տարածքներում կենցաղային աղբի կուտակումների բացառում, դրանց պարբերական մաքրում	2.47	
Մարդու առողջություն	Անի համայնքի բոլոր բնակավայրեր	Դաշտային հրդեհների վնասների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	2.48	
Մարդու առողջություն	Անի համայնքի բոլոր բնակավայրեր	Արագ արձագանքման համայնքային խմբերի ձևավորում, ուսուցում և և համապատասխան գույքով ապահովում	2.49	
Մարդու առողջություն	Մարայիկ Գուսանագյուղ Շիրակական	Հրդեհավտանգ տարածքներում հակահրդեհային անվտանգության տեղեկատվական վահանակների և ցուցանակների տեղադրում	2.50	
Մարդու առողջություն	Մարայիկ Ձորակապ	Դաշտերում ուսումնասիրել ջրակուտակման ավազանների ստեղծման հնարավորությունները	2.51	
Մարդու առողջություն	Մարայիկ Գուսանագյուղ Շիրակական	Վաղ ազդարարման համակարգի մշակում, համապատասխան կառույցների հետ համաձայնեցում և, ըստ անհրաժեշտության, գործարկում	2.52	
Ջրային ռեսուրսներ	Սառնաղբյուր Ձիթանքով Քարաբերդ	Սակավաջրության և ջրի որակի հետ կապված ռիսկերի և արձագանքման գործելակերպի վերաբերյալ հանրության իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	3.1	
Ջրային ռեսուրսներ	Մարայիկ Սառնաղբյուր Ձիթանքով Ձորակապ	Ջրերի քանակի փոփոխության վաղ կանխատեսման, իրազեկման և ազդարարման համակարգի մշակում և, ըստ անհրաժեշտության, կիրարկում	3.2	
Ջրային ռեսուրսներ	Մարայիկ Ձորակապ Լանջիկ Քարաբերդ	Բնակավայրերում բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում, սանիտարական ջրի ապահովում և ջրահեռացման համակարգի կառուցում	3.3	
Ջրային ռեսուրսներ	Անիպեմզա Սառնաղբյուր	Խմելու ջրի համակարգի ֆիզիկական վիճակի և կառավարման արդյունավետության պարբերական մոնիտորինգ և կլիմայի	3.5	

	Զիթհանքով	փոփոխության բացասական ազդեցության գնահատում		
Ջրային ռեսուրսներ	Մարալիկ	Խմելու ջրի մատակարարման այլընտրանքային ուղիների ուսումնասիրություն և, ըստ հնարավորություն, ջրամատակարարման աղբյուրների բազմազանացում	3.6	
Ջրային ռեսուրսներ	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրեր	Ջրամատակարարման համակարգի վիճակի բարելավման աշխատանքների իրականացում. ներքին և արտաքին ցանցի վերանորոգում, մաքրման կայանների հիմնում և այլն	3.7	
Ջրային ռեսուրսներ	Մարալիկ, Գուսանագյուղ	Համայնքային մակարդակում ջրային ռեսուրսների կառավարման պլանի մշակում և ներդրում	3.8	
Ջրային ռեսուրսներ	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրեր	Բնակչության շրջանում ասնիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացում	3.9	
Ջրային ռեսուրսներ	Մարալիկ Գուսանագյուղ, Շիրակական Բարաբերդ	Խմելու ջրի պահեստավորման և անվտանգ պահպանման համակարգերի և կառույցների հիմնում	3.10	
Ջրային ռեսուրսներ	Անիպեմզա Զիթհանքով Զորակապ	Ոռոգման համակարգերի ընդլայնում կամ ոռոգման նոր ցանցերի կառուցում	3.11	
Ջրային ռեսուրսներ	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրեր	Փոքր ջրամբարների հիմնման և ձևալից գոյացած ջրերի, անձրևաջրերի կուտակիչ ավազանների կառուցման համար նպատակահարմար տարածքների ուսումնասիրում և գույքագրում	3.13	
Ջրային ռեսուրսներ	Մարալիկ Բարաբերդ	Համագործակցություն ջրօգտագործողների ընկերությունների հետ և համատեղ ոռոգման ու ջրարբիացման ծրագրերի իրականացում, այդ թվում նաև պետական աջակցության ծրագրերով	3.16	
Ջրային ռեսուրսներ	Անիպեմզա	Հողում ջրի կուտակմանը և պահպանմանը նպաստող գործելակերպի ներդրում (ցանքածածկ, մուլչապատում)	3.18	
Ջրային ռեսուրսներ	Գուսանագյուղ	2 հատ 200000 խոր. մետր տարողությամբ գեոմեմբրանային ջրամբարի կառուցում		
Ջրային ռեսուրսներ	Մարալիկ	Ջրամատակարարման համակարգի ուսումնասիրություն և հսկողության կազմակերպում սողանքավտանգ տարածքներում, ըստ անհրաժեշտության, համապատասխան միջոցառումների ձեռնարկում	3.47	
Ջրային ռեսուրսներ	Լանջիկ	Ջրամատակարարման համակարգի վերգետնյա հատվածների պատշաճ ջերմամեկուսացում, վիճակի պարբերական մոնիտորինգ և ընթացիկ սպասարկման աշխատանքների իրականացում	3.50	
Էներգետիկա	Մարալիկ, Գուսանագյուղ,	Էլեկտրաէներգիայի, Էլեկտրալարերի և կրող սյուների ընթացիկ նորոգում, փոխարինում նորերով և պատշաճ սպասարկում	4.1	

	Շիրակավան Անիպենգա Սառնաղբյուր Ձորակապ Ձիթհանքով Քարաբերդ			
Էներգետիկա	Լանջիկ	Սպասվող արտակարգ կլիմայական պայմանների մասին վաղ ազդարարում	4.2	
Էներգետիկա	Մարալիկ Ձորակապ Շիրակավան	Բարձր լարման գծերի և աշտարակների անվտանգային գոտիների խախտումների վերացում	4.4	
Էներգետիկա	Գուսանագյուղ Շիրակավան Քարաբերդ Ձորակապ Ձիթհանքով	Էներգետիկ օբյեկտներում նախագուշական և կանխարգելիչ ցուցանակների տեղադրում	4.5	
Էներգետիկա	Մարալիկ Գուսանագյուղ Շիրակավան Ձորակապ	Բնակավայրերում էլեկտրահողորդման լարերի անկանոն, նորմատիվների խախտումներով մոնտաժի ու ընթացիկ սպասարկման հետ կապված թերությունների շտկամ և վերացման համար համայնքի կողմից Հայաստանի էլեկտրական ցանցերին դիմումների և ուղերձների հղում	4.6	
Էներգետիկա	Ձիթհանքով	Կայծակավտանգ տարածքներում շանթարգելների տեղադրում	4.7	
Էներգետիկա	Անիպենգա	Էներգետիկ օբյեկտներում հողանցման հետ կապված տեխնիկական խախտումների վերացում	4.8	
Էներգետիկա	Մարալիկ Ձորակապ	Էլեկտրաենթակայանների, էլեկտրալարերի և կրող սյուների ընթացիկ նորոգում, փոխարինում նորերով և պատշաճ սպասարկում	4.9	
Էներգետիկա	Ձորակապ	Էներգետիկ համակարգի արտակարգ իրավիճակների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման միջոցառումների պլանի կազմում և հաստատում	4.11	
Էներգետիկա	Լանջիկ	Էներգամատակարարման համակարգի վերգետնյա հատվածների արդիականացում, վիճակի պարբերական մոնիտորինգ և ընթացիկ սպասարկման աշխատանքների իրականացում	4.18	
Էներգետիկա	Մարալիկ	Հնարավորությունների սահմաններում հրդեհավտանգ տարածքներից էներգամատակարարման ենթակառուցվածքների դուրս բերում	4.30	
Էներգետիկա	Մարալիկ	Էլեկտրալարերի կրող փայտե հենասյուների փոխարինում բետոնյա կամ մետաղական հենասյուներով	4.31	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ Անիպենգա	Բնակավայրերի քամահար հիմնական ուղղությունների երկայնքով	5.1	

	Սառնաղբյուր Չորակապ Քարաբերդ Ձիթհանքով	հողմապաշտպան անտառաշերտերի հիմնում, այդ թվում նաև արագած ծառատեսակներով (բարդի, ուռենի և այլն)		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարայիկ Չորակապ Սառնաղբյուր	Բնակավայրերի կանաչապատ տարածքների ընդլայնում	5.2	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարայիկ Անիպեմզա Քարաբերդ	Համայնքային մակարդակում ըստ բնակավայրերի հանրային տարածքների Ֆունկցիոնալ կանաչապատման ծրագրի մշակում և իրականացում	5.3	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրեր	Կոշտ կենցաղային թափոնների պատշաճ կառավարման համակարգի ստեղծում և աղբահանության կանոնավոր կազմակերպում	5.5	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարայիկ Լանջիկ	Թափոնաղաշտերում կուտակված թափոնների տոփանում և ծածկում հողաշերտով	5.6	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Անիպեմզա Ձիթհանքով Քարաբերդ	Ամպրոպի և կայծակի ժամանակ վարվեցողության և ճիշտ գործելակերպի վերաբերյալ իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	5.9	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարայիկ Չորակապ Սառնաղբյուր	Կայծակավտանգ տարածքներում շանթարգելների տեղադրում, հատկապես հանրային տարածքներում և շինություններում	5.10	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարայիկ Չորակապ	Ենթակառուցվածքների մետաղական տարրերի պարտադիր հողանցում	5.11	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարայիկ Չորակապ	Հակակարկտային պաշտպանության արդյունավետ համակարգի ներդրում (հակակարկտային ցանցերի կիրառում տնամերձ հողամասերում և այգիներում)	5.14	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Անիպեմզա Մարայիկ Չորակապ	Բնակչության շրջանում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ իմացության և իրազեկվածության մակարդակի բարձրացում	5.16	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Քարաբերդ	Սաստիկ շոգերի հետ կապված ռիսկերի և արձագանքման համապատասխան գործելակերպի վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում	5.17	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Լուսաղբյուր Սարակապ Չորակապ Գուսանազյուղ Շիրակական Ջրափի	Բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում	5.18	
Բնակավայրեր և	Մարայիկ	Ճայրահեղ եղանակային պայմաններում սոցիալապես անապահով	5.22	

Ենթակառուցվածքներ	Ձիթհանքով	բնակչության ջեռուցման և վառելիքի ծախսերի մասնակի փոխհատուցում, աջակցություն		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ Սառնաղբյուր Ձիթհանքով	Ջրահեռացման համակարգերի և հեղեղատարների կառուցում, առկա համակարգերի պատշաճ սպասարկում, վերանորոգում և մաքրում	5.26	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Համայնքային մակարդակում ջրային ռեսուրսների կառավարման պլանի մշակում և ներդրում	5.28	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Սելավատարների պարբերական մաքրում	5.30	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Ուսումնասիրել սելավատարի կառուցման հնարավորությունը, հատկապես հին գերեզմանատան տարածքում	5.32	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Բարելավել առկա ջրահեռացման համակարգի վիճակը և իրականացնել մաքրման աշխատանքներ	5.33	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Բացառել ջրահեռացման համակարգը որպես կոյուղատար և աղբատար օգտագործելը	5.34	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Սողանքի ուսումնասիրություն և առկա իրավիճակի հստակ մասնագիտական գնահատում	5.38	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Սողանքի կայունացման անհնարինության դեպքում վտանգի գոտում գտնվող բնակելի տների և ենթակառուցվածքների տեղափոխման հնարավորությունների քննարկում և համապատասխան միջոցառումների իրականացում	5.40	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում	Կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ներդրում, իսկ որոշ բնակավայրերում առկա համակարգի բարելավում	5.44	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ	Դեպի կիսաքանդ և լքված շինություններ թափառող կենդանիների մուտքի սահմանափակում	5.45	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ Չորակապ	Համայնքային փողոցների լուսավորության մակարդակի բարձրացում և ագրեսիվ վարք ունեցող կենդանիների էֆտանագիա	5.46	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Մարալիկ Չորակապ	Անապաստան կենդանիների հիմնախնդրի կարգավորման ռազմավարության մշակում և ներդրում	5.49	
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Իսահակյան	Կոյուղացանցի հիմնանորոգում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Իսահակյան	Վարչական շենքի տանիքի հիմնանորոգում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Ջրափի	Ջրահեռացման համակարգի ստեղծում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Սարակապ	Մշակույթի տան վերանորոգում		

Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Աղին	Կոյուղացանցի վերանորոգում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Աղին	Աղբահանության կազմակերպում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Աղին	Խաղահրապարակի կառուցում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Հայկաձոր	Կենցաղի տան վերակառուցում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Հայկաձոր	Գնացքի կառամատույցի կառուցում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Հայկաձոր	Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Հայկաձոր	Գյուղ մտնող ճանապարհի բարեկարգում		
Բնակավայրեր և ենթակառուցվածքներ	Հայկաձոր	Խաղահրապարակի կառուցում		
Զբոսաշրջություն	Մարայիկ Գուսանազյուղ Անիպեմզա Ձորակապ	Զբոսաշրջային վայրերի քամահար հիմնական ուղղությունների երկայնքով հողմապաշտպան անտառաշերտերի հիմնում, այդ թվում նաև արագաճ ծառատեսակներով (Բարդի, ուռենի և այլն	6.1	
Զբոսաշրջություն	Անիպեմզա Մարայիկ Ձորակապ	Բնակավայրերի կանաչապատ տարածքների ընդլայնում	6.2	
Զբոսաշրջություն	Ձորակապ	Համայնքային մակարդակում ըստ բնակավայրերի հանրային տարածքների Ֆունկցիոնալ կանաչապատման ծրագրի մշակում և իրականացում	6.3	
Զբոսաշրջություն	Ձորակապ	Բնակավայրերի փողոցների սանիտարական մաքրման և բարեկարգման աշխատանքների իրականացում	6.4	
Զբոսաշրջություն	Գուսանազյուղ Ձորակապ	Կոշտ կենցաղային թափոնների պատշաճ կառավարման համակարգի ստեղծում և աղբահանության կանոնավոր կազմակերպում	6.5	
Զբոսաշրջություն	Մարայիկ Ձորակապ	Թափոնադաշտերում կուտակված թափոնների տոփանում և ծածկում հողաշերտով	6.6	
Զբոսաշրջություն	Ձորակապ	Կայծակավտանգ տարածքներում շանթարգելների տեղադրում, հատկապես հանրային տարածքներում և շինություններում	6.9	
Զբոսաշրջություն	Մարայիկ Ձորակապ	Ենթակառուցվածքների մետաղական տարրերի պարտադիր հողանցում	6.10	
Զբոսաշրջություն	Մարայիկ Ձորակապ	Զբոսաշրջությամբ զբաղվողների շրջանում սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ իմացության և իրազեկվածության մակարդակի բարձրացում	6.13	

Չբոսաշրջություն	Ձորակապ	Բուժկետերի պայմանների և հագեցվածության բարելավում	6.15	
Չբոսաշրջություն	Մարալիկ	Չբոսաշրջային օբյեկտներում ՎԷԱ տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում	6.18	
Չբոսաշրջություն	Մարալիկ Լանջիկ	Բնակավայրային նշանակության ճանապարհների մաքրում տեղումներից՝ շտապ օգնության և բուժօժանայությունների հասանելիության ապահովման նպատակով	6.21	
Չբոսաշրջություն	Մարալիկ	Համապատասխան զբոսաշրջային գույքի և հանդերձանքի ձեռքբերում տևական հորդառատ անձևների ժամանակ՝ զբոսաշրջային տուրեր կազմակերպելու հնարավորություն ունենալու համար	6.24	
Չբոսաշրջություն	Մարալիկ	Ձևավորել զբոսաշրջիկներին զբաղեցնելու այլընտրանքային ծառայություններ մատուցելու սխեմաներ և տարբերակներ	6.25	
Չբոսաշրջություն	Մարալիկ	Սողանքավտանգ տարածքի մշտադիտարկում և իրավիճակի գնահատում	6.29	
Չբոսաշրջություն	Մարալիկ	Անվտանգության նորմերի վերաբերյալ իրազեկում, այդ թվում և զբոսաշրջային կազմակերպությունների շրջանում	6.30	
Էկոհամակարգեր	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում	Դաշտամիջյան ճանապարհների վիճակի բարելավում և ջրահեռացման ապահովում	7.2	
Էկոհամակարգեր	Անիպեմզա Մարալիկ Ձորակապ	Համայնքում այգեգործության և հատապտղագործության տարբեր ուղղությունների զարգացում	7.4	
Էկոհամակարգեր	Ձորակապ	Բնական կերհանդակների երկայնքով հողմապաշտպան անտառաշերտերի ձևավորում և անտառարոտների հիմնում	7.9	
Էկոհամակարգեր	Մարալիկ	Անասնակերի տեղական արտադրությունների խթանում	7.10	
Էկոհամակարգեր		Կերհանդակների մակերեսային և խորը բարելավման միջոցառումների իրականացում	7.13	
Էկոհամակարգեր	Մարալիկ Գուսանագյուղ Շիրակավան	Ցանքաշրջանառությունների մեջ նոր, բարձր բերքատու և կլիմայակայուն կերային մշակաբույսերի ներդրում	7.14	
Էկոհամակարգեր	Մարալիկ Սառնաղբյուր Ձիթհանքով	Ագրոանտառտնտեսությունների հիմնում և գյուղատնտեսության վարման պերմակուլտուրային գործելակերպի ներդրում	7.15	
Էկոհամակարգեր	Ձորակապ	Վտանգավոր օդերևութաբանական երևույթների հետ կապված վաղ ազդարարման արդյունավետ համակարգի ներդրում	7.16	
Էկոհամակարգեր	Շիրակավան	Համայնքային մակարդակում առկա գյուղատնտեսական ռեսուրսների պատշաճ հաշվառում, պահպանում և կայուն կառավարման և վերահսկողության մեխանիզմների ներդրում	7.18	

Էկոհամակարգեր	Անի համայնքի բոլոր բնակավայրերում	Արոտավայրերի երկարաժամկետ, կայուն և առավել արդյունավետ կառավարման նպատակով, ըստ բնակավայրերի կազմել և հաստատել Արոտների կառավարման պլաններ	7.19	
Էկոհամակարգեր	Անի համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում	Համայնքներում հանդապահի հաստիքի վերականգնում և արոտների օգտագործման նկատմամբ պատշաճ վերահսկողության սահմանում	7.20	
Էկոհամակարգեր	Ձորակապ	Արոտավայրերի ինսյորդական օգտագործման գործելակերպի ներդրում, արածեցվող կենդանիների թուլատրելի խտության կարգավորում և արոտների տեսակարար բեռնվածության կրճատում	7.21	
Էկոհամակարգեր	Ձորակապ	Ոչխարների և այծերի արածեցման նկատմամբ խիստ հսկողության սահմանում, քանի որ վերջիններս Էական բացասական ազդեցություն են գործում արոտային հողերի վրա	7.23	
Էկոհամակարգեր	Գուսանազյուղ Շիրակական Ձորակապ	Արգելել կենդանիների վաղ գարնանային և ուշ աշնանային արածեցումները, քանի որ առավելապես այդ ժամանակահատվածներում Է արոտների բուսականությունը առավել խոցելի	7.24	
Էկոհամակարգեր	Ձիթհանքով	Ազատ կամ անհամակարգ արածեցման եղանակից անցնել կենդանիների արածեցման հերթական կամ տեղամասային եղանակների, որը մինչև 30%-ով կրճատում Է արածեցման բացասական ազդեցությունը և բարձրացնում արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը	7.26	
Էկոհամակարգեր	Մարայիկ Ձիթհանքով	Սելավաբեր ձորերում աղբի և թափոնների կուտակման բացառում	7.31	
Էկոհամակարգեր	Մարայիկ	Սելավաբեր ձորերում ծառահատումների և թփահատումների բացառում	7.32	
Էկոհամակարգեր	Գուսանազյուղ Ձիթհանքով	Խոտածածկ տարածքներում կենցաղային աղբի և պլաստիկ թափոնների կուտակումների բացառում, դրանց պարբերական մաքրում	7.39	
Էկոհամակարգեր	Անի համայնքի բոլոր բնակավայրերում	Համայնքում կենդանիներ պահելու կարգի սահմանում	7.44	
Էկոհամակարգեր	Մարայիկ Շիրակական	Չոռանթրոպոնոզ վարակիչ և ինվազիոն հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացում	7.46	
Էկոհամակարգեր	Մարայիկ Ձորակապ Շիրակական	Անապաստան կենդանիների հիմնախնդրի կարգավորման ռազմավարության մշակում և ներդրում	7.48	

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՌԻՍԿԻ ՆՎԱՁԵՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Բնակավայր	Լուծում	Լուծման կոդ	Ֆինանսավորման հնարավոր ուղիներ
Անիպենգա Մարալիկ Ձորակապ Սառնաղբյուր Զարաբերդ	Բնակչության տարբեր շերտերի համար ուժեղ երկրաշարժերին պատրաստվածությանն ուղղված ուսուցողական ծրագրերի մշակում և ներդրում	8.1	
Մարալիկ Ձորակապ	Բնակավայրերի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտների և ենթակառուցվածքների վիճակի բարելավմանն ու սեյսմակայունության մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացում	8.3	
Անի համայնքի բոլոր բնակավայրեր	Տեղական ինքնակառավարման մարմինների վտանգավոր սեյսմիկ իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության աստիճանի բարձրացում. մասնակցություն դասընթացներին և վարժանքներին	8.4	
Սառնաղբյուր	Գյուղական բնակավայրերի տարածքի սեյսմիկ ռիսկի գնահատում	8.5	
Մարալիկ Սառնաղբյուր Ձորակապ Զարաբերդ	Խթանել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական խմբերի ստեղծումը երիտասարդների ներգրավմամբ՝ համագործակցելով համապատասխան կառույցների և ծառայությունների հետ	8.11	
Մարալիկ Ձորակապ	Շենքերի մուտքերն, աստիճանահարթակները, միջանցքներն ու պահեստային ելքերն ազատել մեծածավալ առարկաներից	8.14	
Մարալիկ	Վաղորոք որոշել շենքից դուրս գալու առավել կարճ և անվտանգ ուղիները, ունենալ տարահանման այլաներ	8.18	

4.3. Համայնքի կողմից ընտրված գերակա լուծումների ֆինանսավորման հնարավոր աղբյուրները

Հաշվի առնելով ՀՀ համայնքների ֆինանսական փոքր ներուժը, ինչը ներկայացված է համայնքների ֆինանսական վերլուծության բաժիններում, և համեմատելով դրանք համայնքներում արձանագրված խնդիրների և դրանց լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հետ, պարզ է դառնում, որ համայնքները ինքնուրույն ունակ չեն դրանց արձագանքել ամբողջ ծավալով, հատկապես, երբ խոսքը վերաբերվում է կապիտալ ներդրումային ծրագրերին: Այդ իսկ պատճառով, համայնքները պետք է հնարավորինս ներգրավվեն ֆինանսական միջոցներ այլ աղբյուրներից, որոնց թվում կարող են լինել:

ա) Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում սուբվենցիաներ

Համայնքների բյուջեների եկամուտների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռները ընդհանուր ծախսերում կազմում է համապատասխանաբար 2017թ-ի համար 90.6% և 9.4% է, իսկ 2021թ-ի համար 67.8% և 32.2%⁶: Սա նշանակում է, որ համայնքներում գրեթե 3.5 անգամ աճել են կապիտալ ծախսերը, սակայն, եթե վերլուծենք նաև համայնքների բյուջեների ֆոնդային մասի եկամուտները կտեսնենք, որ դրանց մեջ շուրջ 68%-ը կազմում են պաշտոնական դրամաշնորհները: Հետևաբար, համայնքների համար պետական բյուջեն կապիտալ ծրագրերի իրականացման նշանակալի աղբյուր է հանդիսանում: Ուստի, սուբվենցիոն ծրագրերի հայտերը կազմելիս անհրաժեշտ է հենվել համայնքի համար դուրս բերված առաջնահերթություններին, ինչը զգալի կավելացնի թե սուբվենցիոն ծրագրերի միջոցով ֆինանսավորում ներգրավվելու հավանականությունը, և թե այդ ծրագրերի իրականացման հետևանքով ստացված արդյունքները: Նման ծրագրերը կարող են վերաբերվել ենթակառուցվածքների վերանորոգմանը և արդիականացմանը, օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում ջրագծի վերանորոգման ծրագրերին, կամ էներգետիկայի ոլորտում արդյունավետ լուծումների կիրառմանը, որոնք պետք է համապատասխանեն կառավարության կողմից սահմանված սկզբունքներին և ցուցանիշներին⁷:

բ) Միջազգային դոնոր կազմակերպություններ և ֆոնդեր

ՀՀ 2021թ. պետական բյուջեի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի համապատասխան գործակալություններ⁸, Համաշխարհային բանկ, Եվրասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, ԱՄՆ միջազգային զարգացման գրասենյակ, ԵՄ-ի հարևանության ներդրումային բանկ, Վերականգնման և զարգացման եվրոպական բանկ, Վերականգնման և զարգացման միջազգային բանկ, Ասիական զարգացման բանկ, Գերմանիայի զարգացման վարկի բանկ (KfW), Ֆրանսիայի կառավարություն և այլն), կողմից ՏԿԵՆ-ի համակարգին տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ՀՀ մարզերում և Երևան համայնքում նախատեսվել է իրականացնել շուրջ 61 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 64485.0 մլն. դրամ: Վերոնշյալ ծրագրերի վարկային համաձայնագրերը կնքվել են ՀՀ կառավարության (լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն) և նշված բանկերի միջև, որոնց համաձայն ստացված վարկային միջոցների (մայր գումարի և դրանց տոկոսագումարների) մարումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից⁹: Բացի այդ, համայնքներում բազմաթիվ ծրագրեր են իրականացվում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, որոնք ֆինանսավորվում են նշած և այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Հետևաբար, այն

⁶ Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2021թ.), գիրք 14 / Խմբ.՝ Վահրամ Շահբազյանի.- Եր.: Ասողիկ, էջ 81

⁷ Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման, ներկայացման, դրանց քննարկման ու հաստատման կարգ (<https://api.mtad.am/api/file/download/page/5654>)

⁸ Դրանց կազմում են ինչպիսիք են ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիրը, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և այլն:

⁹ Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2021թ.), գիրք 14 / Խմբ.՝ Վահրամ Շահբազյանի.- Եր.: Ասողիկ, էջ 57

լուծումները, որոնք համապատասխանում են այդ կազմակերպությունների սահմանված գերակայություններին կարող են ֆինանսավորում ստանալ նրանց կողմից:

Առանձին ուշադրության են արժանի կլիմայի փոփոխության և բնապահպանական մարտահրավերների դիմակայելուն ուղղված միջազգային ֆինանսական մեխանիզմները, որոնք ֆինանսական աջակցություն են ցուցաբերում զարգացող երկրներին, այդ թվում՝ Հարմարվողականության հիմնադրամը¹⁰, Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամը¹¹ և Կանաչ կլիմայական հիմնադրամը¹²: Նշված հիմնադրամների ֆինանսավորման քաղաքականության առաջնահերթությունների շարքում առանձին տեղ են զբաղեցնում տեղական մակարդակում կլիմայի փոփոխության և բնապահպանության հետ կապված խնդիրների վերածնունդը և լուծմանը, մասնավորապես համայնքների համապատասխան կարողությունների հզորացման և համայնքային զարգացման համատեքստում: Համայնքներում կլիմայական ռիսկերի նվազեցման և հարմարվողականության ծրագրերի ֆինանսավորումը հիշատակված հիմնադրամներից կարող է իրականացվել համայնքի և այդ ոլորտում պետական լիազոր մարմնի հետ համագործակցությամբ, ինչպես նաև համայնքում գործող քաղաքապետության կազմակերպությունների ուղղակի հայտերի միջոցով: Վերջինիս վառ օրինակը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի սահմաններում գործող «Փոքր դրամաշնորհների նախագիծն» է (ՓԴՆ), որը հնարավորություն է ստեղծում համայնքային ծրագրերի ուղիղ ֆինանսավորման (<https://www.sgp.am/am/index>):

գ) Մասնավոր հատված

Մասնավոր հատվածի ներդրումների և իրականացված ծրագրերի տեսակարար կշիռը համայնքներում բավականին ցածր է: Նման ներդրումները հիմնականում իրականացվում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում: Ներդրումների ցածր լինելու պատճառներից են տեղական իշխանությունների՝ տնտեսական ակտիվության վրա ազդելու լիազորությունների բացակայությունը, համայնքում գործող տնտեսավարողների սակավ ֆինանսական կարողությունները, բիզնես համայնքի շրջանակներում իրազեկվածության ցածր մակարդակը և այլն: Նման պայմաններում տեղական իշխանությունների առաջնահերթ խնդիրներից է օգնել մոբիլիզացնել տնտեսավարող սուբյեկտների ռեսուրսները՝ նպաստել կոոպերատիվների, միավորումների ստեղծմանը, որոնք ունակ կլինեն համատեղ ուժերով լուծել վերհանված խնդիրները: Այս խնդիրների շրջանակը կարող է ներառել գյուղատնտեսության, զբոսաշրջության ոլորտները, որտեղ մասնավոր կազմակերպությունները կարող են տնտեսական շահ հետապնդել և շահագրգռված լինեն կատարել ներդրում բիզնեսի ընդլայնման կամ ռիսկերի նվազեցման առումով:

դ) Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության

Ֆինանսավորման այս ձևը հիմնված է վերը թվարկված աղբյուրների համակցման վրա, երբ համայնքում առկա խնդիրների լուծմանը մասնակցում են պետական, համայնքային և մասնավոր հատվածի դերակատարները՝ յուրաքանչյուրը իր լիազորությունների և հետաքրքրությունների շրջանակում: Համագործակցությամբ ֆինանսավորվող այս ծրագրերը հիմնականում կրում են կապիտալ բնույթ և իրենց ծավալներով բավականին մեծ են: Դրանք կարող են ներառել ինչպես գազիֆիկացման, էլեկտրաէներգիայի ստացման այլընտրանքային

¹⁰ Հարմարվողականության հիմնադրամը՝ միջազգային հիմնադրամ է, որը ծրագրեր է ֆինանսավորում ի աջակցություն զարգացող երկրների կլիմայի փոփոխության վնասակար հետևանքներին հարմարվելու նպատակով: Այն ստեղծվել է 2007 թվականին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրությունների ներքո: Հայաստանը հավատարմագրված է Հարմարվողականության հիմնադրամին, <https://www.ecolour.org/hy/news/climate-change/3681/>

¹¹ Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՖ) բազմակողմ բնապահպանական հիմնադրամ է, որը դրամաշնորհներ է համակցված ֆինանսավորում է տրամադրում զարգացող երկրներին կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, միջազգային ջրերի, հողերի դեգրադացիայի, կայուն օրգանական աղտոտիչների, սնդիկի, անտառների կայուն կառավարման, սնդիկ անվտանգության և քաղաքների կայուն զարգացման հետ կապված ծրագրերի համար: Այն ամբողջ աշխարհում կենսաբազմազանության բազմակողմ ֆինանսավորման ամենամեծ աղբյուրն է և տարեկան միջինում ավելի քան 1 միլիարդ դոլար է բաշխում փոխկապակցված բնապահպանական մարտահրավերները լուծելու համար: ԳԷՖ-ը ստեղծվել է 1992 թվականին Ռիոյի երկրի գագաթնաժողովին ընդառաջ և ներառում է 184 երկիր՝ համագործակցելով միջազգային կառույցների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ: Գործում է Հայաստանում, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=53440>

¹² Կանաչ կլիմայի հիմնադրամը (GCF) ստեղծվել է 2010 թվականին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի շրջանակներում՝ աջակցելու զարգացող երկրներին կլիմայի փոփոխությանը հակազդելու նպատակով հարմարվողականության և մեղմման ծրագրեր իրականացնելու համար: Համագործակցում է ՀՀ կառավարության հետ, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12065&Reading=0>

աղբյուրների կիրառման ծրագրերը, այնպես էլ ջրամբարների կառուցման և ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրեր: Ծրագրերի ֆինանսավորման այս եղանակը հնարավորություն է տալիս զգալիորեն կրճատել ռիսկերը, բարձրացնել ծրագրերի կառավարման արդյունավետությունը, ներգրավվել լրացուցիչ վարկային միջոցներ կապիտալի շուկաներից և այլն:

ե) ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ

Միջազգային պրակտիկայում լայն տարածում ունի քաղաքացիական նախաձեռնությամբ ստեղծված նպատակային հիմնադրամների ստեղծումը: Նման նախաձեռնությունների հիմքում է ընկած համայնքի բնակչության վճարակալությունը միավորվելու և միասնական ուժերով սեփական խնդիրներին լուծումներ տալու նպատակով: Այս առումով հետաքրքիր է «Խազեր» Էկոլոգիական և մշակութային ՀԿ-ի կողմից ՄԱՉՖ ՓԴՆ աջակցությամբ Հայաստանում իրականացված ծրագրի փորձը, որով թիրախային բնակավայրերում ստեղծվել և գործարկվել են կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ¹³:

Ի աջակցություն տեղական մակարդակում աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխության հարմարվողականության համայնքային նախաձեռնությունների առաջարկվում է նաև ուսումնասիրել Տեղական ինքնակառավարման և ենթակառուցվածքների նախարարության հատուկ այդ նպատակով մշակված ուղեցույցը¹⁴, ինչպես նաև ՄԱՉՖ աջակցությամբ ԱՌՆԱՊ հիմնադրամի կողմից մշակված ԱՌԿ համայնքային ֆոնդի ստեղծման ուղեցույցը¹⁵:

Այնուամենայնիվ, ծրագրերի ֆինանսավորման ճևերի ընտրության հարցում պետք է դիտարկել համայնքային իշխանություններին վերապահված լիազորությունները և այդ լիազորությունների շրջանակում գտնվող խնդիրների համար համայնքի բյուջեում նախատեսել միջոցներ: Միջոցների սակավության պայմաններում առաջնահերթ է իրականացնել մանրակրկիտ պլանավորում՝ որոշակի ժամանակահատվածի վրա բաշխելով համայնքային բյուջեից կատարվող ծախսերը: Նման ծրագրերը պետք է ներառվեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, ինչը հնարավորություն կտա տարիների համար իրականացնել աշխատանքների պլանավորում և հատկացնել համապատասխան ֆինանսական միջոցներ:

5. ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ, համայնքային մակարդակում ԿՓ հարմարվողականության խոչընդոտները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

1. կառավարման և ինստիտուցիոնալ,
2. տեղեկատվական, գիտելիքային և տեխնոլոգիական,
3. ֆինանսական:

Ավնհայտ թերություններ կան ԿՓ վերաբերյալ տեղեկատվության հավաքման, վերլուծության, կառավարման, տվյալների ու տեղեկատվության տրամադրման ինստիտուցիոնալ համակարգման առումով: ԿՓՀ հարցերը պատշաճ չեն ներառված առանցքային դերակատարում ունեցող համայնքային կառավարման մարմինների գործառույթներում, անկատար է ներուլորտային և միջուլորտային համագործակցությունը և ԿՓՀ հետ կապված հարցերի ճիշտ հասցեագրումը:

Համայնքային կառավարման բոլոր օղակներում ԿՓ հարմարվողականության ուղղությամբ գիտելիքների ցածր մակարդակը, տնօրինվող տեղեկատվության և դրա մատչելիության պակասը, ինչպես նաև իրավասու մարմինների միջև օպերատիվ հաղորդակցման խնդիրների առկայությունը Եական խոչընդոտներ են ԿՓ պայմանավորված ԱՌՆ և դիմակայունության բարձրացման համար: Հիմնական խոչընդոտներից է նաև ԿՓՀ ոլորտում ժամանակակից

¹³ <https://www.sgp.am/am/Projects?id=79>, <http://lori.mtad.am/news/item/2020/02/21/news32/>, <https://khazer.org/wp-content/uploads/2019/10/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AF%D5%AC%D5%A5%D5%BF-14.10.2019.pdf>

¹⁴ Մեթոդական ուղեցույց Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման» վերաբերյալ, ՏԿԵՆ, https://api.mtad.am/storage/pages/files/2022/11/pdf/07_12-01-sc796-6368bb5f3eccc.pdf

¹⁵ Աղետների ռիսկի կառավարման համայնքային ֆոնդի ստեղծման ուղեցույց, ՄԱՉՖ-ԱՌՆԱՊ, <http://library.cmsa.am/media/docs/000.pdf>

տեխնոլոգիաների կիրառման անբավարար մակարդակը և ԿՓ հարմարվողականության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների բացակայությունը:

Ֆինանսական միջոցների սահմանափակությունը և դրանց ոչ նպատակային պլանավորումը ԿՓ հարմարվողականության գործընթացի իրագործումը անմիջականորեն խոչընդոտող գործոններից են: ԿՓ հարմարվողականության ֆինանսավորման և ներդրումների ծավալի մեծացումը, ինչպես նաև համապատասխան ֆինանսական մեխանիզմների ստեղծումը թույլ կտան բարելավել հարմարվողականության գործողությունների շրջանակը, որն անհրաժեշտ է ԿՓ հետ կապված ռիսկերի պատշաճ կառավարման համար:

Համայնքային մակարդակում ԿՓ հարմարվողականության հիմնական խոչընդոտներից են նաև համեմատաբար սահմանափակ տնտեսական աճը: Անի համայնքի տնտեսությունը հիմնականում բաղկացած է կլիմայական տեսակետից զգայուն ոլորտներից, որոնց զարգացումը մեծապես կախված է բնական Էկոհամակարգերից և բնական պաշարներից: Թեև համաշխարհային պրակտիկայում առկա են հարմարվողականության հնարավոր տարբերակներ այս տեսակի խոցելիությունը նվազեցնելու համար, մեր համայնքերում զարգացման այս փուլում և կառավարման առկա իրողության պայմաններում ԿՓ գործընթացը շատ հեռու է նույնիսկ բավարար լինելուց:

ԿՓ հարմարվողականության մյուս կարևոր խոչընդոտներից են՝ բնակչության մեծամասնության ցածր եկամուտները, ԿՓ հիմնախնդիրների և հարմարվողականության միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության և գիտելիքների ցածր մակարդակը, բնապահպանական մշակույթի և վարքագծի խնդիրները, ՏԻՄ-երի կողմից հանրային ունեցվածքի, մասնավորապես բնական Էկոհամակարգերի և բնական պաշարների ոչ պատշաճ կառավարումը, գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում ԿՓ հարմարվողականության գործելակերպերի և միջոցառումների կիրառության պակասը, համայնքային մակարդակում ԿՓ հիմնախնդիրների հասցեագրմանն ուղղված պլանավորման, բյուջետավորման և համապատասխան գործողությունների բացակայությունը:

ԿՓ խնդիրների լուծման աշխուժացմանն ուղղված մյուս կարևոր հատվածը գիտական և կրթական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կառույցների և գործարարների մասնակցության խրախուսումն է, համապատասխան մեխանիզմների ստեղծումը և հանրային-մասնավոր հատված համագործակցության և գործընկերության նախաձեռնությունների խթանումը:

Գիտակրթական և ուսումնական հաստատությունները շատ թույլ են ներգրավված երկրում ԿՓ հարմարվողականության պլանավորման, գործողությունների իրականացման, ինչպես նաև վերահսկողության և արդյունքների գնահատման գործընթացներում: Ոլորտը կառավարող մարմինները, համայնքները և անհատները գրեթե անտեղյակ են գիտական հաստատությունների հետազոտությունների արդյունքներից և նրանց կողմից մշակված ԿՓ հարմարվողականության հետ կապված նոր գործելակերպերից և միջոցառումներից:

Սահմանափակ են մասնավոր հատվածի ցանկությունը և կարողությունները մասնակցելու ԿՓ հարմարվողականության միջոցառումների պլանավորման, ներդրումների ներգրավման ու համապատասխան գործողությունների իրականացման գործընթացներին:

Սովորաբար միջազգային կառույցների ֆինանսական աջակցությամբ իրականացվող քաղաքացիական հասարակության կառույցների նախաձեռնությունները և գործողությունները ԿՓ հարմարվողականության ոլորտում շատ հաճախ պետական ու համայնքային իշխանությունների կողմից աջակցություն չեն ստանում և չեն խրախուսվում կամ կրում են լուրջ գործողությունների բնույթ, իսկ ԿՓ գործելակերպերը չեն կրկնօրինակվում և տարածվում, չեն դառնում համայնքների պլանավորման և բյուջետավորման գործընթացների մաս:

Հաշվի առնելով ԿՓ հետևանքով համայնքներին հասցվող վնասները, պատրաստվածության ներկա վիճակն ու առկա խոչընդոտները, անհրաժեշտություն կա արդեն այսօր, ԿՓ հարմարվողականությունը դիտարկել որպես Անի համայնքի կայուն զարգացման կանոնադրյալ ուղղություններից մեկը և դարձնել բոլոր նոր մշակվող ռազմավարությունների, ծրագրերի և պլանների անբաժանելի բաղադրիչ:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հետևյալ առաջարկները.

- ԿՓ և հարմարվողականության վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված գործողություններ,

- Ջրային ռեսուրսների կառավարման հստակ մեխանիզմների մշակում, ներդրում և մոնիթորինգ,
- Ոռոգման ժամանակակից ջրախնայող տեխնոլոգիաների կիրառման խթանում,
- Գյուղատնտեսության ոլորտի խորհրդատվական ծառայությունների, ինչպես նաև անասնաբուժական և բուսասանիտարիայի ծառայությունների որակի և հասանելիության բարելավում,
- Սելավավտանգ և սողանքավտանգ տարածքների ուսումնասիրություն և խնդիրների լուծմանն ուղղված հստակ քայլերի նախաձեռնում,
- Արոտավայրերի երկարաժամկետ, կայուն և արդյունավետ կառավարմանն ուղղված քայլերի իրականացում,
- Կոշտ թափոնների կառավարման պլանի մշակում և իրականացում,
- Տարբեր տեսակի վտանգավոր երևույթների վաղ ազդարարման մեխանիզմների մշակում և ներդրում,
- Գյուղական առողջապահական ծառայությունների բարելավում:

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Շիրակի մարզում արձանագրված բնածին վտանգներից առաջացած արտակարգ դեպքերի հանրագումարն ըստ տարիների, 2012-2021թթ.

Արտակարգ դեպքերի պատճառ դարձած վտանգներ	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
Վայրի կենդանիների հարձակում					1		1	1		2	5
Քարաթափում										1	1
Ուժեղ կարկուտ		4	3	3		2	16	11	13	7	59
Ուժեղ քամի	4	5	7	11	3	3		16	8	12	69
Ձնաբուք	15	8	5	4	1	1	4	3	2	1	44
Մերկասառույց						1	1	1		1	4
Սողանք											
Տեղատարափ անձրև	1					1	1		5		8
Հեղեղում		1		1	1		2		1		6
Կայծակ	2	1			1			2	2	1	9
Կարկուտ	3										3
Փլվածք			2			2				1	5
Ցրտահարություն							1	1	2		4
Առատ ձյուն				1							1
Սելավ					1				3		4
Ձնահյուս	1										1
Գրունտային ջրերի հորիզոնի բարձրացում											
Երաշտ											
ԸՆԴԱՄԵՆԸ	26	19	17	20	8	10	26	35	36	26	223

Հավելված 2

**Շիրակի մարզում արձանագրված արտակարգ դեպքերի վիճակագրությունից բխող առանձին
վտանգների
գարգացման միտումներ, 2012-2021թթ.**

Վտանգ	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Քարաթափում										1
Կարկուտ	3	4	3	3		2	16	11	13	7
Ուժեղ քամի	4	5	7	11	3	3		16	8	12
Ձնաբուք	15	8	5	4	1	1	4	3	2	1
Մերկասառույց						1	1	1		1
Սողանք										
Տեղատարափ անձրև	1					1	1		5	
Հեղեղում		1		1	1		2		1	
Կայծակ	2	1			1			2	2	1
Փլվածք			2			2				1
Ցրտահարություն							1	1	2	
Առատ ձյուն				1						
Սելավ					1				3	
Ձնահյուս	1									

Հավելված 3

Անի համայնքում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված արտակարգ դեպքերի/տարերային երևույթների հանրագումարն ըստ բնակավայրերի, 2007-2022թթ.

Բնածին վտանգներից առաջացած արտակարգ դեպքեր	Անիական	Մարտիկ	Շիրակական	Հայկաձոր	Աղին	Զրափի	Բագրավան	Գուլամագյուղ	Սառնաղբյուր	Խահական	Քարաբերդ	Զորակապ	Զիթեմարտ	Լանջիկ	Անիպեմզա	Սարակապ	Լուսաղբյուր	ԸՆԴԱՄԵՆԸ
Հեղեղում, գետերի վարարում		1																1
Ուժեղ քամի	9	3	2	2	2	2	4	2	5	3	8	1	1	2	2		1	49
Ձնաբուք									1					3				4
Կարկուտ		2		3	5	5	1	3	5	1	3	3	1	2		1	1	36
Հորդառատ անձրև					1	1										1		3
Շանթահարում									1									1
Արգելափակում ձյան մեջ											1							1
Սելավ																		0
ԸՆԴԱՄԵՆԸ	9	6	2	5	8	8	5	5	12	4	12	4	2	7	2	2	2	95

Հավելված 4

Անի համայնքում վերջին 15 տարիների ընթացքում գրանցված արտակարգ դեպքերի/տարերային երևույթների հանրագումարն ըստ տարիների, 2007-2022թթ.

Բնածին վտանգներից առաջացած արտակարգ դեպքեր	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	ԸՆԴԱՄԵՆԸ
Հեղեղում, գետերի վարարում		1															1
Ուժեղ քամի	2		1	5			1	1	6			13	3	16		1	49
Ձնաբուլք				1			2	1									4
Կարկուտ	3					4	5	3	3		8	4	3	1	2		36
Հորդառատ անձրև												3					3
Շանթահարում														1			1
Արգելափակում ձյան մեջ							1										1
Սելավ														0			0
ԸՆԴԱՄԵՆԸ	5	1	1	6	0	4	9	5	9	0	8	20	6	18	2	1	95

Աղյուսակ 1. Անի համայնքի 2020-2022թթ. բյուջեների եկամուտների պլանային ցուցանիշները

Հ/հ	Եկամուտի տեսակները	2020		2021		2022	
		Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %
1	2	3	4	5	6	7	8
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	988,688.69	100.0%	1,255,299.30	100.0%	1,212,155.60	100%
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	157,511.60	15.9%	178,110.40	14.2%	191,228.80	15.8%
1.1.	Գույքային հարկեր անշարժ գույքից	64,000.00	6.5%	60,000.00	4.8%	77,792.50	6.4%
1.2.	Գույքային հարկեր փոխադրամիջոցներից	85,231.30	8.6%	105,399.10	8.4%	107,123.80	8.8%
1.3.	Տեղական տուրքեր	5,280.30	0.5%	9,711.30	0.8%	4,812.50	0.4%
1.4.	Պետական տուրքեր	3,000.00	0.3%	3,000.00	0.2%	1,500.00	0.1%
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ	649,456.59	65.7%	854,454.00	68.1%	935,704.80	77%
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	181,720.50	18.4%	222,734.90	17.7%	265,222.00	22%
ա	Սեփական եկամուտներ	195,757.8	19.8%	222,950.20	17.8%	241,451.80	20%
բ	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	524,414.09	53.0%	655,631.20	52.2%	664,087.60	55%
գ	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	125,042.50	12.6%	198,822.80	15.8%	271,617.20	22%
դ	Պաշտոնական դրամաշնորհներ, պատվիրակված լիազորությունների իրականացման համար մուտքեր	5,474.30	0.6%	4,895.10	0.4%	1,999.00	0%

7. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Անի խոշորացված համայնքում իրականացված տվյալների հավաքագրման աշխատանքներ





Անի խոշորացված համայնքում առկա հիմնախնդիրները ցուցադրող նկարներ







Անի խոշորացված համայնքի զբոսաշրջային հետաքրքրությունն ներկայացնող վայրերը



